Ազգ
Azg
14 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 226(4844)
ISSN: 1829-1651

# «Օրինագիծը կանցնի, քանի որ Սարկոզին կանաչ լույս է վառել դրա առջեւ»

## *Պարզաբանում է Ֆրանսիայում Թուրքիայի նախկին դեսպան Քորութուրքը*

Դեկտեմբերի 22-ին Ֆրանսիայի խորհրդարանի լիագումար նիստում կքննարկվի հանձնաժողովում արդեն ընդունված Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար պատիժ սահմանող օրինագիծը: Քննարկմանը հետեւելու է քվեարկությունը: Ժխտելու համար պատիժը ենթադրում է մեկ տարի ազատազրկում եւ 45 հազար եվրո տուգանք:

Ժխտողականությունը քրեականորեն պատժող օրինագծի մուտքը Ֆրանսիայի խորհրդարանի օրակարգ բուռն հակազդեցություն է առաջ բերել Թուրքիայում: ANCA լրատվական գործակալությունը հարցի առնչությամբ դիմել է Ֆրանսիայում Թուրքիայի նախկին դեսպան Օսման Քորութուրքի պարզաբանումներին, որոնք դեկտեմբերի 12-ին արտատպվել են avim.org կայքէջում:

Ի դեպ, Քորութուրքը ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական կուսակցության պատգամավոր է: Գործակալության հարցերին պատասխանելիս նա ասել է, որ ֆրանկո-թուրքական առկա «հրմշտոցը» պայմանավորված է նախագահ Նիկոլա Սարկոզիի դիրքորոշումով: Ապա Քորութուրքը շարունակել է. «Սարկոզին ի սկզբանե հակաթուրքական դիրքորոշում է որդեգրել, ասելով. «Ես դեմ եմ ոչ թե Թուրքիային, այլ Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցությանը»: Մինչդեռ Թուրքիային կամ նրա անդամակցությանը դեմ լինելու տարբերությունը շատ չնչին է, հետեւաբար՝ անընդունելի մեզ համար»:

Օրինագծին Թուրքիայի հնարավոր հակազդեցության առնչությամբ Քորութուրքը նշել է. «Անելիքները շատ չեն: Մենք Ֆրանսիայի վրա ազդելու լծակներ չունենք, ոչ էլ տնտեսական այնպիսի հարաբերություններ, որոնցով հնարավոր լինի ցավ պատճառել այդ երկրին: Հետեւաբար մնում է շարունակել դիվանագիտական հարաբերությունները: Քանի որ Սարկոզին կանաչ լույս է վառել օրինագծի առջեւ, օրինագիծը դժբախտաբար կանցնի: Իսկ դա կսրի Ֆրանսիայի հետ Թուրքիայի հարաբերությունները: Պարզորոշ երեւում է, որ ֆրանսիացիները հակակրանք չունեն Թուրքիայի նկատմամբ: Դա քաղաքական գործիչներն են պարտադրում, մասամբ նաեւ հայկական սփյուռքը եւ Սարկոզին: Ֆրանսահայերի քվեն ստանալու համար 180 աստիճանի շրջադարձ է կատարում»:

Հ. Չ.

# Հայ գերիների վերադարձն ապահովելու համար միջազգային կառույցների հետ համագործակցությունը կխորանա

Պաշտպանության նախարարությունում երեկ տեղի է ունեցել ՀՀ գերիների, պատանդների եւ անհայտ կորածների հարցերով զբաղվող հանձնաժողովի ամփոփիչ նիստը՝ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի գլխավորությամբ:

Ներկայացնելով կատարված աշխատանքները՝ հանձնաժողովի անդամները շեշտել են, որ թեպետ դանդաղ, սակայն որոշակի արդյունքի կարողացել են հասնել: Ադրբեջանում պահվող հայ գերիներից այս տարի Հայաստան է վերադարձել Արթուր Բադալյանը, եւ երեք հայ ռազմագերիների ադրբեջանական կողմն ուղարկել է երրորդ երկիր:

Այս տարի հայկական կողմն Ադրբեջանին է վերադարձրել մեկ ռազմագերու, եւ մեկին էլ ուղարկել է երրորդ երկիր: Սեյրան Օհանյանը հայտարարել է, որ հաջորդ տարի հանձնաժողովն ավելի է խորացնելու համագործակցությունը միջազգային կառույցների հետ՝ Ադրբեջանում գտնվող մյուս հայ գերիների վերադարձն ապահովելու համար: Հ. Հ.

# «Թուրքիան տեղ չունի Եվրոմիության կազմում»

## *Ասել է Ֆրանսիայի նախագահը՝ պատասխանելով «Մոնդի» հարցերին*

Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին «Մոնդի» հարցերին պատասխանելիս, թուրքական հանրային հեռուստատեսության եւ այլ լրատվամիջոցների երեկվա վկայությամբ, ասել է, որ ինքը չի փոխել Թուրքիայի մասին իր կարծիքը՝ ընդգծելով. «Թուրքիան տեղ չունի Եվրոմիության կազմում»:

Այնուհետեւ նա շարունակել է. «Նախ եւ առաջ Եվրոմիությունը կազմավորվել է Եվրոպայի համար: Որքան գիտեմ, քաղաքական մեծ ուժ եւ մեծ ազգ հանդիսացող մեր թուրք բարեկամները Փոքր Ասիայում են: Իհարկե, ես Թուրքիայի հետ հնարավորինս լավ հարաբերություններ եմ ցանկանում: Իմ կարծիքով, Թուրքիան կարեւոր առաքելություն ունի, եւ դա Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ կամուրջի դերն է: Մի՞թե Թուրքիայի օգտին է այդ դերը թողած մեկ այլ կառույցին անդամակցելը: Կարծում եմ՝ նա դրանով կթուլանա»:

Հ. Չ.

# Վլադիմիր Պետրոսյանը Մոսկվայի ժամանակավոր փոխքաղաքապետ




ՌԴ Պետդումայի օրերս կայացած ընտրություններով պատգամավոր ընտրված Մոսկվայի քաղաքապետի սոցիալական քաղաքականության հարցերով տեղակալ Լյուդմիլա Շվեցկովան, քաղաքապետարանի մամուլի ծառայության ներկայացուցչի տեղեկացմամբ՝ հաստատել է, որ ինքը տեղափոխվում է Դումա՝ օրենսդիր աշխատանքի: Իսկ ՌԴ մայրաքաղաքի փոխքաղաքապետի պաշտոնում Շվեցկովային, «ՌԻԱ Նովոստի»-ի տեղեկացմամբ՝ կփոխարինի քաղաքապետարանի բնակչության սոցիալական ապահովության բաժնի ղեկավար Վլադիմիր Պետրոսյանը:

# Նարեկ Հարությունյանն ազատ արձակվեց

**Քննիչ Ռաֆիկ Մկրտչյանի որոշմամբ ազատ է արձակվել «Նարեկացի» արվեստի միության նախագահ, բարերար Նարեկ Հարությունյանը: Վերացվել է խափանման միջոց կալանքը: Ազատ են արձակվել նաեւ «Ձի էյջ Տորիջ էնթերփրայզ» ընկերության կազմակերպչական գծով փոխտնօրեն Անի Մնացականյանն ու գլխավոր հաշվապահ Արթուր Գալստյանը:**

**Հարությունյանին ազատ են արձակել Հայաստանից չբացակայելու ստորագրությամբ:**

**Հիշեցնենք, որ դեկտեմբերի 9-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը որոշում էր կայացրել երկամսյա կալանքի ենթարկել Նարեկ Հարությունյանին: Նրան մեղադրում են փողերի լվացման, առանձնապես խոշոր չափերի հարկերի մուծումից խուսափելու համար: Պետեկամուտների կոմիտեի տարածած հաղորդագրության համաձայն**




**Հարությունյանը պետությանը 109 միլիոն դրամի վնաս է պատճառել: Հ. Հ.**

# Հուսահատ բնակիչները բացահայտում են Արամի 72-80 շենքի «առեղծվածը»




ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**Երեւանի բնակիչ Սոնիկ Մաղաքյանը մինչեւ 2004 թվականն ապրել է Բյուզանդի 13-21 հասցեում: 2004-ին այս հասցեի բնակարանները իրացվել են, եւ նախկին բնակիչներին խոստացել են ապահովել բնակարաններով: Սոնիկ Մաղաքյանին խոստացել են բնակարան տալ Արամի 72-80 հասցեում, տիկին Մաղաքյանը նույնիսկ 20 միլիոն դրամից էլ ավելի գումար է վճարել նոր բնակարան ստանալու համար: Սակայն 7 տարիների ընթացքում նա ոչ միայն բնակարան չի ստացել, այլեւ պարզել է, որ իր գնած ու իրեն հասանելիք բնակարանը միաժամանակ վաճառված է մի քանի հոգու:**

*Տես էջ 2*

# Գաբալայի կայանը՝ Ռուսաստանի ու Ադրբեջանի արանքում

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ադրբեջանի Գաբալայի ռադիոլոկացիոն կայանը տարածաշրջանի առումով նշանակություն ունենալուց բացի, նաեւ այլ տեսանկյուններից է գնահատականների արժանանում, հատկապես երբ շահագործում է ռուսաստանյան կողմը, իսկ Ադրբեջանն էլ գտնվում է Իրանի, Թուրքիայի, Վրաստանի եւ երկրորդ կարգի հարեւանների առումով այնպիսի երկրների միջեւ, որտեղ իրադրությունը, մեղմ ասած, հանգիստ չէ: Ասել է թե ռադիոլոկացիոն կայանն այսօրինակ իրավիճակում մեծ դերակատարություն է ձեռք բերում:

Կայանի վարձակալության ռուս-ադրբեջանական պայմանագրի ժամկետը լրանալու հանգամանքը ասպարեզ բերեց բազմաթիվ խոսակցություններ ու վերլուծություններ, թե ինչ զարգացում կարող է ունենալ կայանի ապագան: Ներկա դրությամբ ակնհայտ է, որ այն կմնա Ռուսաստանի հսկողության տակ, միեւնույն ժամանակ կբարձրացվի վարձակալության վճարը, բայց որքանով՝ դա դեռ կքննարկեն:

Ադրբեջանական կայքէջերը տեղեկացնում են, որ երեկ իսկ մեկնարկել են ռուս-ադրբեջանական միջկառավարական մակարդակի բանակցությունները կայանի վարձակալության հարցի ու նախատեսվող վարձավճարի չափի առնչությամբ: Բաքու ժամանած ռուսաստանյան պատվիրակությունը ղեկավարում է ՌԴ պաշտպանության փոխնախարար Անատոլի Անտոնովը, իսկ բանակցություններն էլ նախատեսվում է ավարտել մինչեւ դեկտեմբերի 15-ը:

2002-ին կայանի վարձակալության առնչությամբ ստորագրված ռուս-ադրբեջանական համաձայնագրի ժամկետը ավարտվում է 2012-ի դեկտեմբերի 24-ին: Այդ ժամկետը մինչեւ 2025-ը երկարաձգելու ռուսական ցանկությանն ընդառաջ Ադրբեջանը ներկայումս պահանջում է ոչ միայն առավել բարձր վարձավճար, այլեւ կայանի աշխատանքներում ադրբեջանցի զինվորական անձնակազմի ավելի մեծ թվով ներկայացուցիչների ներգրավում՝ տեղի բնակիչներին թողնելով կայանին կից զինվորական ավանի սննդի, առեւտրի եւ այլ ոլորտների ծառայությունների ու սպասարկման ապահովումը:

Իսկ հիմքում փաստացի հնացել են այն բոլոր փաստարկները, որ Գաբալայի կայանի կարեւորությունն էին շեշտադրում դեռեւս 2002-ին, երբ ստորագրվում էր ռուս-ադրբեջանական վարձակալական համաձայնագիրը՝ խորհրդանշական վարձավճարով: Այն ժամանակ Ռուսաստանը փորձում էր Գաբալայի կայանի միջոցով լուծել Արեւելյան Եվրոպայում ամերիկյան հակահրթիռային համակարգերի տեղակայման դեմ իր պայքարի արդյունավետության հարցը, իսկ Ադրբեջանն էլ հավասարակշռելու փորձ էր անում ռուս-ադրբեջանական հարաբերություններում, որոնք այնքան էլ նպաստավոր ընթացք չէին ստանում:

*Տես էջ 3*

# «Խոջալուի կոտորածին անձամբ մասնակցել է Սերժ Սարգսյանը»

## *Հայտարարում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Ջեմիլ Չիչեքը*

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի «թուրք ղեկավարները վաղ թե ուշ ծնկի են իջնելու Ցեղասպանության զոհերի հուշարձանի առջեւ» խոսքերին բուռն հակազդեցությամբ արձագանքել էր Եվրոմիության գծով նախարար եւ գլխավոր բանակցող Էգեմեն Բաղըշը, ընդ որում՝ ամենայն սանձարձակությամբ: Այդ արձագանքը դեկտեմբերի 12-ին տեղ էր գտել Եվրասիական ուսումնասիրության կենտրոնի պաշտոնական կայքէջ avim.com-ում:

Ըստ կայքէջի, Բաղըշը «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության շրջանային կազմակերպությունների համագումարում ասել է. «Օրերս հարեւան փոքրիկ երկրի իր չափը չիմացող ղեկավարը՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը թուրքերի մասին իրենից դուրս բաներ է ասել: Ես այս ամբիոնից դիմում եմ նրան եւ ասում. «Դու սովի եւ աղքատության մատնելով ուժասպառ ես արել քո ազգին: Սովի պատճառով Հայաստանի բնակչությունը 4 միլիոնից նվազել է 2 միլիոնի: Մարդիկ երկրից փախչում են: Նրանց մի մասը եկել է մեր երկիր: Այստեղ մեր ծերերին ու երեխաներին են խնամում: Դա թուրք ազգի մեծահոգության ցուցանիշն է: Եթե հարկ է պատասխանել նրան, ապա թող իմանա, որ թուրքերին ծնկի իջեցնելը դեռ որեւէ մեկին չի հաջողվել: Կարծում եմ, նա զգալով այս խոսքերի գինը իր երկրի համար, արդեն պետք է սկսած լինի ծեծել իր ծնկերը: Թող ոչ ոք չկասկածի, որ մեր ազգը գիտի անգիտակիցներին ծնկի բերելու ձեւը»:

Հաջորդ օրը սանձարձակությամբ Բաղըշին է հավելել Թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահ Ջեմիլ Չիչեքը: Թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ՝ Մեջլիսի նախագահը, մասնակցելով Հեյդար Ալիեւի մահվան 8-րդ տարելիցի առթիվ Թուրքիայում Ադրբեջանի դեսպանատան կազմակերպած երեկոյին, «ցնցող» խոսքեր է ասել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հասցեին:

Թուրքական հանրայինի հաղորդմամբ՝ Չիչեքն ասել է, որ ներկա պահին կարեւորագույն խնդիրը Ադրբեջանի տարածքի 1/5-ի գտնվելն է օկուպացիայի տակ, Հայաստանը ոչնչացնելով օկուպացրած տարածքի բնական պաշարները, մարդկության դեմ գործում է նաեւ մեկ այլ հանցագործություն: Այնուհետեւ Չիչեքն անդրադարձել է «ցեղասպանության պնդումներով Հայաստանի՝ Թուրքիային հասցրած մեղադրանքներին»: Ապա նա նշել է. «Մինչդեռ նորագույն պատմության ամենամեծ կոտորածներից մեկը 1992-ին աշխարհի աչքի առջեւ իրականացվեց Խոջալուում: Այդ կոտորածներին անձամբ մասնակցել է ներկայումս Հայաստանի նախագահի պաշտոնը վարող Սերժ Սարգսյանը»:

Վերջում Մեջլիսի նախագահ Ջեմիլ Չիչեքն ավելացրել է. «Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի իրավունքների պաշտպանությունը մեր արտաքին քաղաքականության առաջնահերթություններից է: Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը Կովկասում խաղաղության ու կայունությանը սպառնացող գլխավոր խնդիրն է: Մենք հիմնահարցով շահագրգիռ պետություններին ու միջազգային կազմակերպություններին կոչ ենք անում վերջ տալ հայերի անարդարացի օկուպացիային: Ադրբեջանի տարածքում օկուպացիայի վերացումը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման անառարկելի նախապայմանն է»:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

# Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունն «Ազգի» հույսի՞ն է

**Անահիտ Մակիչյանը տարբեր մեքենայություններից կորցրել է իր տունը Բյուրեղավանում եւ հայտնվել է փողոցում: «Ազգը» մի քանի անգամ անդրադարձել է այս դեպքին, նշելով, որ 55-ամյա կինը գիշերում է փողոցում: Վերջին անգամ դիմել էինք աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարին: «Ազգը», նրա բնակարանի հարցը խճճված ու կարճ ժամանակում չլուծվող համարելով, անձամբ նախարարին խնդրել էր, որ «Վերնիսաժի» կանգառում այս ցուրտ ձմռանը գիշերող կնոջը գոնե ժամանակավոր կացարանով մինչեւ գարուն ապահովելու խնդիրը հանձնարարի լուծել: Նախարարության մամուլի պատասխանատու Հասմիկ Խաչատրյանի պատասխանը, սակայն, մեզ հույս չի տալիս, որ այս կնոջը հնարավոր է օգնել: Պատասխանում նշվում է, որ կինը հրաժարվում է ժամանակավոր կացարան տեղափոխվել (կնոջ պատճառաբանությունը չի նշված, իսկ այդ հրաժարումը եղել է երեւի ամիսներ առաջ, մեր առաջին հրապարակումից հետո): Իսկ նոյեմբերի 25-ին էլ նախարարության երկու աշխատակից այցելել են «Ազգի» նշած վայրը, Ա. Մակիչյանն այնտեղ չի եղել. «Նախարարությունը պատրաստ է «Ազգ» օրաթերթի հետ համատեղ լուծել Անահիտ Մակիչյանի հարցը, ուստի ակնկալում ենք լրագրող Մարիետա Խաչատրյանի աջակցությունը կնոջը գտնելու հարցում», նշված է նախարարության հասարակայնության հետ կապերի պատասխանում:**

**Նկատենք, որ «Ազգ» օրաթերթը սոցիալական խնդիրներ լուծող հիմնարկ չէ, ինչին կոչված է սոցիալական հարցերի նախարարությունը, մեր գործը խնդիր բարձրացնելն է, իսկ յուրաքանչյուր մարդ, որ փոխադրականից իջնում է «Վերնիսաժի» կանգառում, հաջողությամբ դեմ է առնում Անահիտ Մակիչյանին, ինչը չի հաջողվել նախարարության խեղճ աշխատակիցներին: Արդար լինելու համար ասենք, որ նախարարության պատասխանից հետո կրկին զրուցեցինք անտուն կնոջ հետ, եւ նա հաստատեց, որ, այո, ինքը չի ուզում գնալ ժամանակավոր կացարան, քանի որ իր միակ նպատակը իր բնակարանը վերադարձնելն է: Եթե իրեն որեւէ ատյան ուզում է օգնել՝ ապա թող օգնի հետ ստանալ խաբեությամբ իր ձեռքից խլված բնակարանը Բյուրեղավանում: Իսկ գիշերելու է դրսում այնքան, մինչեւ իրավասու կառույցները, որոնցից շատերը տեղյակ են խնդրին, լուծեն իր խնդիրը: Նա դրսում գիշերելու է որպես բողոքի նշան՝ իր խնդիրը չլուծելու դեմ է բողոքում... ցրտահարվելով: Նա նշում է, որ միայն խորհուրդներ է լսում, իսկ որ ուտելու հաց չունի՝ ոչ ոք իրեն չի ուզում նպաստ նշանակել:**

**Մենք էլ, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից հույսներս կտրելով, դիմում ենք Հայաստանի գլխավոր դատախազությանը՝ Անահիտ Մակիչյանի բնակարանը խաբեությամբ խլելու խնդրի հետ կապված, ինչպես նաեւ Կոտայքի մարզի ղեկավարությանը՝ խնդիրը համակողմանի ուսումնասիրելու խնդրանքով:**

Մ. Խ.

# Հուսահատ բնակիչները բացահայտում են Արամի 72-80 շենքի «առեղծվածը»

*1-ին էջից*

Արամի 72-80 հասցեից բնակարաններ սպասող քաղաքացիներից Սոնիկ Մաղաքյանը միակը չէ, որը հայտնվել է նման պատմության մեջ: Իհարկե, առաջին բացատրությունը նրանք պահանջել են շենքի բաժնետերերից՝ Գագիկ Պատոյանից ու Սիմոն Աղազարյանից: Ստացել են միեւնույն պատասխանը՝ թյուրիմացություն է պատահել, ձեզ ուրիշ բնակարան կտանք:

Բնակարանների առուծախի պայմանագրերից տուժած քաղաքացիները, որոնք երեկ հավաքվել էին «Հայելի» ակումբում, կոնկրետ չնշեցին, թե ո՞ր բաժնետիրոջը կառուցապատող ո՞ր ընկերությունն է պատկանում: Միայն ընդհանուր նշեցին, որ ապօրինություններն իրականացնողը «Դավիթ-Նարեկ», «Գրանս-Ինվեստ», «Գապբնակշին» բաժնետեր ՍՊԸ-ներն են եւ բաժնետերեր Գագիկ Պատոյանն ու Սիմոն Աղազարյանը:

Սոնիկ Մաղաքյանը պատմեց. «Գագիկ Պատոյանի կատարածի մասին հաղորդել եմ ոստիկանություն, սակայն ոչինչ չեն արել: Նրանք թաքցնում են Պատոյանին եւ ինձ պատասխանել են, թե Պատոյանը մեկնել է Մոսկվա: Իսկ Սիմոն Աղազարյանը պետք է դատապարտվեր 12 տարի ազատազրկման, սակայն հիմա ազատության մեջ է»:

Այսօրվա դրությամբ՝ Արամի 72-80 շենքի 172 բնակարանի համար կնքվել է նախնական առուծախի շուրջ 700 պայմանագիր: Այսինքն՝ մի բնակարանի համար վճարել են մի քանի հոգի, իսկ թե վերջում ո՞վ կստանա բնակարանը, գնորդները չգիտեն: Ըստ Սոնիկ Մաղաքյանի՝ պայմանագրերն էլ կնքել է նոտար Ալվարդ Մելքոնյանը: Բանախոսը պատմեց՝ երբ գնացել է իր բնակարանը, տեսել է, որ դռան վրա գրված է՝ վաճառված է, եւ նշված են եղել ոչ թե իր, այլ ուրիշ մարդկանց հեռախոսահամարները. «Իմ իմանալով՝ ես իմ բնակարանի 4-րդ գնորդն եմ»:




Երեւանի բնակիչ Վահան Սարուխանյանը եւս տուժել է առուծախի պայմանագրից: Մինչեւ 2006 թվականը նա ապրել է Եկմալյան փողոցի վրա, 2006-ին այդ շենքը քանդել են: Վահան Սարուխանյանը պայմանագիր է կնքել «Գրանս Ինվեստ» ընկերության հետ, որպեսզի նոր բնակարան ստանա Արամի 72-80 շենքից, սակայն դեռ չի ստացել: Սիմոն Աղազարյանն այնուհետեւ առաջարկել է նրան սպասել մինչեւ ուրիշ շենք կկառուցեն ու իրեն բնակարան կտան այդ շենքից: Վահան Սարուխանյանը նոր պայմանագրի առաջարկին չի համաձայնել, սակայն առանձնապես մեծ հույս էլ չունի, թե Արամի 72-80-ից հեշտ ու հանգիստ բնակարան կստանա:

Վահան Սարուխանյանը 2006-ից վարձով է ապրում, Գագիկ Պատոյանը մի քանի տարի վճարել է տան վարձը: «Սակայն վերջին 2 տարիներին վարձի գումար այլեւս չեմ ստացել: Իսկ հիմա չգիտեմ՝ ո՞ւմ դիմեմ, ինչպե՞ս վարվեմ», ասում է պարոն Սարուխանյանը:

Արամի 72-80-ից բնակարաններ սպասող քաղաքացիները երեկ հավաքվել էին նաեւ սույն շենքի մոտ: Այստեղ հանդիպեցի Գառնիկ Այվազյանին, որը նախկինում ապրել է Արամի 78 շենքում, որը քանդել են: Գառնիկ Այվազյանը պայմանագիր է կնքել «Գապբնակշին» ընկերության տնօրեն եւ այդ ժամանակ Երեւանի քաղաքապետարանի լիազորված անձ Սիմոն Աղազարյանի հետ, որպեսզի բնակարան ստանա Արամի 72-80-ից: Գառնիկ Այվազյանը դեռեւս բնակարան չի ստացել, թեեւ ստանալու ժամկետն արդեն լրացել է: «Ոչ էլ գիտեմ, թե որն է իմ բնակարանը, որպեսզի պարզեմ՝ վաճառե՞լ են ուրիշին, թե՞ ոչ»:

Արամի 72-80-ից բնակարաններ սպասող քաղաքացիների մի մասն արդեն դիմել է կառավարություն, ՀՀ նախագահի աշխատակազմ՝ պահանջելով լուծել բնակարանների հարցը, սակայն որեւէ լուծում դեռ չեն գտել: Նույնիսկ չգիտեն՝ արժե՞ դիմել դատարան, թեեւ շենքի բաժնետերերը հենց դա են խորհուրդ տվել: Շենքի առջեւ հավաքված քաղաքացիներն ասում են, որ դատարաններին չեն վստահում, եւ վախենում են, որ դատարանը հերթական թակարդն է լինելու:

# Նոր ավտոճանապարհ Ուլնեցի-Ռուբինյանց փողոցների միջեւ

## *Կկառուցի «Դորոժնիկ» ՍՊԸ-ն՝ փոխարենը ստանալով հարակից հողերը բնակելիներ կառուցելու համար*

Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում Ուլնեցի-Ռուբինյանց փողոցների միջեւ «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից ապամոնտաժված 2,5 կմ երկարությամբ երկաթուղային գծի հատվածում ավտոճանապարհ կկառուցվի: Այդ մասին համապատասխան որոշումը կընդունվի վաղը՝ կառավարության նիստի ժամանակ:

Համաձայն ճանապարհի կառուցման մասին որոշման նախագծի, «Երեւաննախագիծ» ընկերության նախնական հաշվարկներով, ավտոճանապարհ կառուցելու արժեքը կազմում է շուրջ 850 մլն դրամ: Երեւան համայնքի բյուջեի միջոցները չեն կարող բավարարել նշված ճանապարհը կառուցելու համար: Ըստ անշարժ գույքի կադաստրի տվյալների, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի այդ տարածքներում բնակավայրերի նշանակության հողամասերի 1 քմ մակերեսի շուկայական միջին արժեքը 40000 դրամի միջակայքում է: Այսինքն, 1,4 հա հողամասի շուկայական արժեքը կարող է կազմել միայն 568 մլն դրամ: Հետեւաբար, կառավարության որոշմամբ ճանապարհի կառուցումը կիրականացնի «Դորոժնիկ» ՍՊԸ-ն, դրա դիմաց ձեռք բերելով նոր փողոցին հարակից վերոնշյալ 1,4 հա տարածքը եւ այնտեղ կառուցելով «15-20 2-3 հարկանի առանձնատներ, ինչպես նաեւ դրանց սպասարկման համար անհրաժեշտ 5-7 միավոր հասարակական նշանակության շինություններ»:

2,5 կմ երկարությամբ ավտոճանապարհի երթեւեկելի մասի լայնությունը կլինի 7-9 մետր, ապահովելով կայանատեղեր, իսկ մայթերի լայնությունը՝ 1,5 մետր: Ավտոճանապարհը Ուլնեցու փողոցը կկապի Ռուբինյանց փողոցի հետ՝ առանց փողոցների հետ հատումի: Զգալիորեն կթեթեւանա Կոմիտասի պողոտայի, Դ. Անհաղթի, եւ Ռուբինյանց փողոցների երթեւեկությունը, կբարելավվի Ռուբինյանց-Պ. Սեւակ փողոցների խաչմերուկի թողունակությունը: Շինարարության առաջին փուլը նախատեսվում է ավարտել 2012-ի հոկտեմբերին:

Հաջորդ փուլերով ճանապարհը հասնելու է մինչեւ Ազատության պողոտա, Հ. Քոչարի փողոց եւ Կոմիտասի պողոտա, հետո նաեւ 1-ին փուլում կառուցված ճանապարհահատվածը Ռուբինյանց փողոցի վերջնամասում կկապվի դեպի Նոր Նորք եւ Ավան վարչական շրջաններ տանող ճանապարհներին:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

# Վկան հաստատում է. Կարեն Մեհրաբյանը ՀՀ եւ ԼՂՀ սպառազինության փաստեր է հավաքել

Կարեն Մեհրաբյանը, Աշոտ Չթրկյանն ու Ռոմիկ Մաթեւոսյանը մեղադրվում են պետական դավաճանության հատկանիշներով հանցանք գործելու մեջ, Կարեն Պետրոսյանը, Արթուր եւ Դավիթ Ավետիքյանները՝ հանցագործության մասին իմանալու եւ իրավապահ մարմիններին չհայտնելու հատկանիշներով:

Գործի պատմությունն ու մեղադրական եզրակացությունը **«Ազգ»** օրաթերթը ներկայացրել է դեկտեմբերի 6-ի համարում:

Երեկ Կենտրոն եւ Նորք-Մարաշ առաջին ատյանի դատարանում նախագահող դատավոր Մնացական Մարտիրոսյանի գլխավորությամբ շարունակվեց դավաճանության մեջ մեղադրվող անձանց դատավարությունը: Ըստ մեղադրական եզրակացության՝ պետական դավաճանության մեջ մեղադրվող հանցավոր խմբի պարագլուխը Կարեն Մեհրաբյանն է: Վերջինս երեկ հայտարարեց, որ իրեն սպառնում են, սպառնում են նաեւ կնոջն ու ընտանիքի անդամներին, եւ դատարանին խնդրեց միջոցներ ձեռնարկել՝ պաշտպանելու ընտանիքի անվտանգությունը: Դատավոր Մնացական Մարտիրոսյանն էլ հուշեց, որ համապատասխան հայտարարությամբ Մեհրաբյանի ընտանիքի անդամները պետք է դիմեն ոստիկանությանը:

Երեկ գործի շրջանակներում հարցաքննվեցին դատարանում ներկա գործով անցնող երկու վկաները:

Կառլեն Ալեքսանյանն անհատ ձեռներեց է: Նա Կարեն Մեհրաբյանի դպրոցական ընկերն է: Հարաբերություններն այնքան էլ ջերմ չեն: Ալեքսանյանի ներկայացմամբ՝ հարեւանական կապով են կապված: Արդեն 3 տարի է, ինչ Կառլենն ինտերնետ ակումբ է հիմնադրել եւ աշխատեցնում է: Այս տարվա հունիս-հուլիս ամիսներին 4 անգամ նրա ակումբի ծառայություններից օգտվել է Կարենը: Ինտերնետ ակումբի կահավորումն այնպես է կատարվել, որ Կառլեն Ալեքսանյանն իր համակարգչից կարող է մուտք գործել այլ համակարգիչ եւ տեսնել, թե իր հաճախորդներն ինչով են զբաղված, որ կայքերից են օգտվում: Կառլենին նախ զարմացրել է Կարենի էլեկտրոնային կրիչը (ֆլեշկան): Թեպետ համակարգչից շատ լավ է հասկանում, սակայն նման արտադրանքի երբեւէ չի հանդիպել: Հենց դա էլ պատճառ է դարձել, որ Կառլենը ստուգի հարեւանի էլեկտրոնային կրիչը: Պահպանված ֆայլերից մեկում կարդացել է, որ Կարենն ինֆորմացիա է հավաքում ԼՂՀ բանակի մասին: Փաստաթղթերից մեկը վերաբերել է զինված ուժերին եւ ԼՂՀ բանակի հաստիքային ցուցակին: Մեկ ուրիշն էլ պարունակել է ՀՀ եւ ԼՂՀ զինված ուժերի սպառազինության եւ ռազմական տեխնիկայի մասին հարցաշար:

Փաստը անհանգստացրել է Ալեքսանյանին: Վերջինս սկսել է առավել ուշադիր հետեւել, երբ Մեհրաբյանն այցելել է իր ակումբ: Պարզվել է, որ Կարենը հիմնականում օգտվել է Odnoklassniki. ru, Mail.ru կայքերից, իսկ Google որոնողական ցանցի միջոցով տվյալներ է փնտրել ՀՀ եւ ԼՂՀ զինված ուժերի ու սպառազինության մասին:

«Կարենը երեւի ֆիլմ է ցանկանում նկարահանել կամ գուցե ռեֆերա՞տ է գրում Ղարաբաղի զինված ուժերի մասին», սկզբում կասկածել է Ալեքսանյանը, սակայն ենթադրությունն այնքան էլ համոզիչ չի թվացել, եւ սեփական անվտանգության համար դիմել է իր համար վստահելի անձին՝ Արաբկիրի դատախազ Գրիշա Միքայելյանին: «Ես չեմ ուզում էս ամենի հետ գործ ունենամ, ինձ չի հետաքրքրում, թե Կարենն ինչով էր զբաղվում, բայց ինձ անհանգստացրեց, որ էդ փաստաթուղթը կարող է ինձ համար վտանգավոր լինել», ասաց Ալեքսանյանը: Նա դատախազի խորհրդով հայտարարություն է տալիս Ազգային անվտանգության ծառայությանն ու պատմում կատարվածը: Նախաքննական ցուցմունքում Ալեքսանյանը պատմել է, որ ըստ հարեւանների՝ Մեհրաբյանի գործերը սկզբում լավ են գնացել, հետո՝ կտրուկ վատացել, այն աստիճան, որ կարող էր նույնիսկ տունը կորցնել: Ավելին, բակում լուրեր են պտտվել, որ Կարենը Թուրքիայում սիրուհի ունի, որի վրա ծախսում է ամսական 1.500 դոլար: Իսկ Թուրքիա հաճախակի այցելություններից նրա ֆինանսական վիճակը կայունացել է:

Երկրորդ վկան՝ Ղեւոնդ Հովհաննիսյանը, Աշոտ Չթրկյանի քեռին է: Նրա ներկայացմամբ՝ Աշոտի աշխատավարձը ցածր էր, եւ նա աշխատանքից դուրս է եկել: Որոշ ժամանակ անց քեռին տեղեկանում է, որ Աշոտը աներոջ հետ ցանկանում է գնալ Ռուսաստան աշխատելու, բայց չի ստացվում: Հետագայում աները մեկնում է Ռուսաստան, Աշոտը՝ ոչ: Ավելի ուշ քեռին տեղեկանում է, որ Աշոտը հաճախակի մեկնում է Թուրքիա եւ զբաղվում պայուսակների բիզնեսով: Կարեն Մեհրաբյանին՝ Աշոտի ընկերոջն ու հարսանիքի քավորին, եւ քրոջ որդուն Ղեւոնդ Հովհաննիսյանը մի անգամ տեսել է իրենց տանը, երբ նրանք համակարգչով աշխատում էին: Ավելի ուշ արդեն Հովհաննիսյանը տեղեկացել է, որ քրոջ որդուն մեղադրում են պետական դավաճանության մեջ: «Մի քանի օր անց Աշոտին տեսա արդեն ձեռնաշղթաներով», պատմեց Հովհաննիսյանը՝ հավելելով, որ Աշոտը կյանքն ընկերոջ համար տվող անձնավորություն է: «Թե հիմա ո՞նց է սայթաքել, ի՞նչ է արել, ես տեղյակ չեմ»:

Գործով մեկ այլ վկա՝ Մարիամ Գրիգորյանը բացակայում էր: Ըստ դատավորի՝ Մարիամը բացակայում է բնակության վայրից. փոստային ծառայությունից է նման ծանուցում ստացել: Ռոման Մաթեւոսյանի պաշտպան Սարգիս Ասլանյանի տեղեկացմամբ՝ Մարիամը Հայաստանում է, սակայն վախենում է ներկայանալ դատական նիստին:

Դատական հաջորդ նիստը տեղի կունենա դեկտեմբերի 19-ին: Այս նիստում էլ կշարունակվի վկաների հարցաքննությունը: Դրանց մի մասը կանցկացվի դռնփակ դատական նիստում, քանի որ հարցաքննվելու են օպերատիվ ծառայության աշխատակիցները: Հիշեցնենք, որ եթե մեղադրանքը հաստատվի, վերոնշյալ վեց անձինք կդատապարտվեն 10-15 տարվա ազատազրկման:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

# Հանձնաժողովների համագործակցությունն արդյունավետ է եղել

Աշխատանքային այցով Արցախում գտնվող ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պատվիրակությունը ԼՂՀ հանրային ծառայությունները եւ տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի անդամների հետ Ստեփանակերտում ամփոփել է համատեղ աշխատանքի արդյունքները: Համագործակցության մասին հուշագիր կնքվել էր անցյալ տարի, եւ ՀՀ ՏՄՊՀ նախագահի Արտակ Շաբոյանի գնահատմամբ՝ 2011թ. հանձնաժողովների միջեւ փոխգործակցությունը եղել է արդյունավետ: Մասնավորապես, ըստ Ա. Շաբոյանի, կատարվել է ապրանքային շուկաների համատեղ ուսումնասիրություն, ստուգայցեր են կազմակերպվել Ստեփանակերտի մի շարք առեւտրային օբյեկտներ, ինչպես նաեւ Արցախում տնտեսական մրցակցության պաշտպանության կառույցի օրենսդրական դաշտի կատարելագործման վերաբերյալ ներկայացվել են ուշագրավ առաջարկներ: Բացի դրանից՝ ՀՀ ՏՄՊՀ-ն գերիշխող դիրքի չարաշահման, հակամրցակցային գործողությունների բացահայտման, փորձի փոխանակման ուղղությամբ Երեւանում դասընթացներ է կազմակերպել արցախցի գործընկերների համար: Շեշտելով համագործակցությունն ավելի ակտիվացնելու անհրաժեշտությունը, Ա. Շաբոյանը միաժամանակ հավաստել է, որ իրենց հանձնաժողովը պատրաստակամ է ունեցած փորձը լիարժեքորեն փոխանցելու արցախցի գործընկերներին, աջակցել այստեղ ծագած խնդիրների լուծմանը: Նա համառոտ ներկայացրել է 2011թ. ընթացքում ՀՀ ՏՄՊՀ կատարած աշխատանքը, համաձայն որի՝ պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ հանձնաժողովի կողմից կայացվել է 197 որոշում, տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ նշանակվել 300 միլիոն դրամի տուգանք: Ընդ որում, ներկա դրությամբ գանձվել ու պետական բյուջե է մտցվել 170 միլիոն դրամ, երբ 2010-ին եղել է ընդամենը 20 միլիոն դրամ:



ԼՂՀ հանրային ծառայությունները եւ տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի նախագահի Հակոբ Ղահրամանյանը, հավելելով գործընկերոջը, նշել է, որ հայաստանյան հանձնաժողովի կողմից հրատարակվող տեղեկագրում կան տվյալներ երկու հանձնաժողովների համատեղ կատարած աշխատանքների մասին, եւ որ այդ տվյալներն անպայման կտեղադրվեն ինտերնետում: Ընթացիկ տարում, միջազգային ծրագրերի շրջանակներում կազմակերպված սեմինարներին ու խորհրդակցություններին մասնակցել են նաեւ արցախյան համասեռ կառույցի ներկայացուցիչները, որի կապակցությամբ երախտագիտություն հայտնելով, Հ. Ղահրամանյանը վստահություն է հայտնել, որ դրանք կլինեն շարունակական:

Երկու կառույցների ղեկավարները ստորագրել են գալիք տարվա համատեղ աշխատանքի ծրագիրը, որը դարձյալ արդյունավետ փոխգործակցություն է խոստանում:

Նույն օրը ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պատվիրակությանն ընդունել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են ոլորտին վերաբերող հարցեր:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

# Գաբալայի կայանը...

*1-ին էջից*

Սակայն ներկայումս, որքան էլ ռադիոլոկացիոն կայանն ինքը կարեւորություն ունենա, դրա նշանակությունը երկու կողմի համար էլ բավականին նվազել է, ուստի բանակցությունների արդյունքը կարող է լինել ինչպես համաձայնագրի երկարաձգումը, այնպես էլ մասնակի կամ ամբողջական դադարեցումը: Մյուս կողմից, դա բնավ էլ չի խոսի ռուս-ադրբեջանական նորմալ հարաբերությունների մասին:

Ռուսաստանյան կողմն, ի դեմս պաշտպանության նախարար Անատոլի Սերդյուկովի, շահագրգռված է պահպանել նույն վարձավճարը, ասել է թե ադրբեջանական կողմից առաջ քաշված մի քանի անգամ նախկինը գերազանցող վարձավճարի պայմանը թեժ քննարկման թեմա կարող է դառնալ: Բայց դրանով հանդերձ, Ռուսաստանը ցանկանում է նաեւ կրճատել կայանով զբաղված տարածքները, քանի որ կայանը ամբողջությամբ պետք է վերակառուցվի, իսկ նորացված կայանի դեպքում զգալի տարածքների կարիք չի լինի: Նոր կայանը կլինի «Վորոնեժ-ՎՊ» տիպի՝ ներկայիս «Դարյալի» փոխարեն:

# Orange բլոգ. նոր սերնդի վեբ միջավայր հայ բլոգերների համար

Orange-ը ներկայացրեց Orange բլոգը՝ վեբ միջավայր, որտեղ յուրաքանչյուրը կարող է ստեղծել իր սեփական «տարածքը» եւ հավաքել իր բոլոր հիշարժան պահերը նկարների, վիդեո նկարահանումների, աուդիո ֆայլերի կամ գրառումների տեսքով եւ կիսվել դրանցով մտերիմների հետ: Orange բլոգն Orange-ի այն բացառիկ ծառայություններից է, որից կարող են օգտվել ոչ միայն Orange-ի բաժանորդները, այլ նաեւ բոլոր նրանք, ովքեր ունեն ինտերնետի մուտքի հնարավորություն:

«Սա պրեմիերա է ինչպես Հայաստանում, այնպես էլ Orange-ի աշխարհագրության երկրներում. նման պլատֆորմ դեռ մեր գործընկերներից ոչ մեկը չի առաջարկել: Այն արտահայտում է Orange-ի ցանկությունը՝ հայաստանյան ինտերնետային օգտատերերին տրամադրել հայերեն լեզվով պարզ ու հասկանալի բլոգային պլատֆորմ: Լինելով շարժական ինտերների առաջատարը երկրում եւ տեսնելով հայկական բլոգոսֆերայում տիրող



աշխուժությունը՝ մենք ցանկանում ենք աջակցել ու խթանել հայերեն լեզվով էլեկտրոնային բովանդակության զարգացմանն ու տարածմանը», ասաց Orange Արմենիայի գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան**:

Orange բլոգը նոր սերնդի բլոգային պլատֆորմ է, որն իր անդամներին տալիս է օգտագործման անհավասարելի ազատություն ու հարմարավետություն:

Բլոգում կարելի է գրանցվել ինչպես http://orangeblog.am կայքում, այնպես էլ պարզապես Orange համարից ուղարկելով կարճ հաղորդագրություն 2564 համարին՝ բովանդակության մասում նշելով OK, միջակայք, էլ. փոստի հասցե, ինչպես օրինակ՝ «OK contact-centre@orangearmenia.am»:

Orange-ի բաժանորդները Orange բլոգից օգտվելիս կունենան հատուկ առավելություններ: Նրանք կարող են իրենց պրոֆիլը միացնել բջջային հեռախոսահամարին եւ բոլոր ծանուցումներն անվճար ստանալ անմիջապես հեռախոսից՝ կարճ հաղորդագրության տեսքով: Orange-ի բաժանորդները կարող են նաեւ 2564 համարին ուղարկված անվճար կարճ հաղորդագրությունների միջոցով «թարմացնել կարգավիճակը», թողնել մեկնաբանություններ կամ գրել պատասխաններ: Ավելին, կարելի է նաեւ լուսանկարներ կամ տեսանյութեր վերբեռնել բլոգ անվճար MMS-ի միջոցով: Պետք է պարզապես 2564 կարճ համարին ուղարկել MMS՝ կցելով նկարը կամ տեսանյութը:

Orange բլոգը հնարավորություն է տալիս իր Orange-ի բաժանորդ օգտատերերին տեղադրելու մինչեւ 2 գիգաբայթ ընդհանուր ծավալով լուսանկարներ, տեսանյութեր, տեքստային գրառումներ կամ այլ բովանդակություն, որը ոչ Orange բաժանորդների դեպքում կկազմի 100 մեգաբայթ:

ԱԶԳ

## Քաղաքական

# Էդուարդ Անտինյան. «Ընտրություններին մասնակցելու տարբեր ձեւաչափեր կան»

### *«Ազգի» հարցազրույցը ՀՌԱԿ ատենապետ Է. Անտինյանի հետ*

**- Սկսենք նրանից, թե ՀՌԱԿ-Արմենական-ՌԱԿ հուշագրի ստորագրումից հետո ի՞նչ արձագանքներ եղան, գործնական հետաքրքրություն արդյո՞ք եղավ սկսված միավորման գործընթացի հանդեպ:**

- Ե՛վ արձագանքներ կան, ե՛ւ միավորումը ողջունողներ: Նաեւ մարդիկ կան, որոնք ուզում են մտածել-հասկանալ, նոր արձագանքել՝ դա էլ բնական է, որովհետեւ տեւական ժամանակ պառակտված վիճակին սովորել էին, ինչել էին փոխադարձ մեղադրանքներ ու բացասական տրամադրվածություն միմյանց նկատմամբ, ու հանկարծ մենք ասում ենք՝ ամեն ինչ դրեք մի կողմ: Իհարկե, ոչ մեկը չի ասում, որ միավորումը միանգամից լուծելու է բոլոր խնդիրները կամ նման տարաձայնությունները մեկ օրում կարելի է լուծել: Բայց ի վերջո «մեր ուժը մեր պառակտվածության մեջ է» սխեման, կյանքն է ցույց տվել, չի աշխատում: Ի վերջո մի անգամ մենք պետք է խնդիր դնենք, անկախ տարաձայնություններից, միասնական տեսակետներ ձեւավորել (թե՛ Հայաստանի ռամկավար ազատական կուսակցությունը, թե՛ Արմենական-ՌԱԿ-ը եւ թե Սփյուռքի մեր համակիրները):

Արձագանքներ եղել են ե՛ւ Հայաստանից՝ մտավորականներ, հասարակական կազմակերպությունների ղեկավարներ, ե՛ւ Սփյուռքից: Բայց եւ ամեն դեպքում զգուշավորություն կա նաեւ՝ ուզում են հասկանալ, թե միավորումն ո՞ւր է տանելու, ի՞նչ խնդիր է լուծելու: Բանակցություններ եւս գնում են, եւ չէինք ուզենա արձագանքների առումով շոուի վերածել եւ անպայման շատ արագ ցույց տալ, թե ահա այսպիսի դրական մոտեցում կա, դա կխանգարի գործին:

Բացասական մոտեցում էլ գուցե լինի, չնայած դրանց մասին չեմ լսել, բացի այն հարութառաքելյանական «կոլեկտիվ» հայտարարությունից, որը հենց առաջին օրն արվեց: Իսկ թե որքանով էին այդ մարդիկ իրականում դա ստորագրել՝ անհայտ մնաց, չեմ էլ ուզում դրա մեջ խորանալ: Այն մարդիկ, որոնք համախմբմանը կողմնակից են, հասկանում են, որ Հայաստանում յոթանասունից ավելի կուսակցության գոյությունն անիմաստ է, եւ նույն գաղափարական հոսանքներում եղող կուսակցությունները պետք է համախմբվեն մի քանի հզոր կուսակցությունների մեջ՝ աշխարհն է այդ ճանապարհով գնացել: Մանավանդ՝ Հայաստանում լիբերալ-դեմոկրատական գաղափարախոսությունը մինչեւ օրս չի կարողացել իր իրական դերակատարությունն ունենալ. անկախության հենց սկզբում մենք ավելի շատ առնչվել ենք վայրի կապիտալիզմին, կապիտալի նախասկզբնական կուտակման բոլոր թերություններին, որն էլ հասարակության մեջ լիբերալ-դեմոկրատական գաղափարների հանդեպ բացասական վերաբերմունք է առաջացրել էն դեպքում, երբ այդ մարդիկ իշխանության չեն եղել, եւ այդ արժեքները չեն ներկայացվել Հայաստանում, նոր պետք է դա արվի:

**- Այդ դեպքում ձեր ապագան ո՞ր դաշտում եք պատկերացնում՝ իշխանակա՞ն, թե՞ ընդդիմադիր ուժերի հետ, քանի որ առանց համագործակցության չեք կարողանա մրցակցել:**

- Չեմ ցանկանում շտապել-կոնկրետացնել, այդ դեպքում կստացվի, որ մենք ամեն ինչ նախապես որոշել ենք, նոր ենք դիմել մեր գործընկերներին: Չկա նման խնդիր: Քանի որ ի սկզբանե, հուշագրի ստորագրման օրը հայտարարել ենք, որ երկուսով դուրս ենք գալիս ճանապարհ եւ ճանապարհային քարտեզն անելու ենք մեր գործընկեերների հետ, Հայաստանի եւ Սփյուռքի հետ միասնաբար...

Մենք ինչ-որ սցենար ունենք անշուշտ, բայց չենք ցանկանում այդ սցենարն անուղղակիորեն պարտադրել՝ կհավաքվենք-կարծիքներն ի մի կբերենք, առավել եւս, որ ժամանակ կա մինչեւ առաջիկա ընտրությունները...

**- Ժամանակ գիտե՞ք ինչու չկա՝ իշխանական ուժերը Նոր տարուց հետո կվերադառնան հստակեցված ձեւաչափով՝ այնուամենայնիվ երեւում է, որ այստեղ համախմբման կենտրոն է ստեղծվում, ընդդիմադիրների հետ եւս կարծես որոշ պարզություն կա արդեն հիմա, դուք հունվարից հետո կհայտնվեք արդեն պատրաստի ձեւավորված դաշտի մեջ, այդ իմաստով՝ շուտ չէ, բացի դրանից՝ առանց նյութական հնարավորությունների Հայաստանում ընտրության մասնակցել հնարավոր չէ...**

- Շատ կարեւոր է հասանելի դարձնելը, որ ոչ թե ավանդական կուսակցությունը կոշտ ձեւով դիրքորոշում ունենա՝ ընդդիմադիր թե իշխանամետ, այլ պարզապես այնպես գործել պետականություն ունեցող երկրում, որ կարողանանք ներպետական կամ ներկուսակցական խնդիրների պատ-



ճառով սփյուռքահայ կուսակցական գործընկերներին չվանել Հայաստանից: Մենք խնդիր ունենք, նրանք էլ անելիք ունեն, անկախության քսան տարին որակապես փոխել է անելիքն ու փոխհարաբերությունները, դրանք վերարժեւորել ենք: Բայց առայժմ այդ վերարժեվորածը չենք կարողանում կյանքի կոչել:

Գտնում եմ, որ ընտրություններին մասնակցելը կուսակցությանն անհրաժեշտ է, եւ որեւէ դեպքում կուսակցությունը չպետք է մտածի, թե ինչ-որ ռեսուրսի բացակայությունը կամ ոչ բավարար լինելը պատճառ է, որ ընտրություններին չմասնակցի: Մասնակցելու տարբեր ձեւաչափեր կան՝ ինքնուրույն, դաշինքով, մեծամասնականով, որեւէ ընտրացուցակով. ամեն տարբերակ կա, պետք է փորձել ընտրել որեւէ մեկը՝ նայած հնարավորություններին: Բայց որ մասնակցելու ենք՝ հաստատ: Տեւական ժամանակ ՀՌԱԿ-ը ցավալիորեն դուրս է մնացել այդ գործընթացից: Հայաստանում, այո, քաղաքական գործունեության եւ ընտրությունների վրա շատ մեծ գումարներ են ծախսվում, անգամ շատ ավելին, քան թղթի վրա ցույց է տրվում: Դա նշանակում է, որ քաղաքական հետաքրքրությունների համար միշտ էլ գումար ճարվում է: Կուսակցությունը պետք է լինի գործոն, հետաքրքրական, անելիք ունեցող, այդ դեպքում միշտ էլ կգտնվեն համապատասխան ներդրում անողներ:

**- Ինչո՞վ եք զբաղված այժմ:**

- Թե՛ ներսում, թե՛ դրսում առաջին հերթին բոլորին հասանելի ենք դարձնում, թե ի՞նչն էր հուշագրի ամբողջ իմաստը՝ ըմբռնելի դարձնելու համար, որ ամեն մեկը փորձի ոչ թե հակադրության վրա գործընկեր գտնել, այլ ընդհակառակը, բոլորով մեկ խնդիր դնենք, բոլորով մեկ ուժի հետ համագործակցենք, մեկ քաղաքական գիծ տանենք: Որ ռամկավարական տեսակետ փնտրելիս միասնական մոտեցում գտնեն՝ մենք զբաղված ենք դրանով, մեր գործընկերներին այդ մասին տեղեկացնելով: Միասնական քաղաքական գծով որ գնանք՝ աստիճանաբար կպակասեն հակասությունները, եւ կմեծանա ընդհանուր ճանապարհ գնալու ցանկությունը: Մարդիկ ինչ-որ մի պահի կհասկանան, որ էդ ամբիցաները, էդ հակասությունը ընդամենն անձնավորված պետք է մնան, որովհետեւ գաղափարական հակասություն չի կարող լինել նույն կուսակցության մեջ:

**- Հարություն Առաքելյանի հետ կապված պատմության լուծումը ո՞նց է լինելու...**

- Կարծում եմ՝ որքան նա փորձում է քրեական գործը քաղաքականացնել՝ դրանով ավելի շատ է խրվում քրեական գործերի մեջ եւ ավելի ծանրացնում իր վիճակը: Ես չեմ կարծում, որ դա նրա օգտին է: Շատ կարճ ժամանակ հետո կհամոզվի, որ շատ ավելի լավ էր ի սկզբանե ընդունել, թե ի՞նչ է կատարվում, եւ նստեինք- գործընկերային հարաբերություններով գտնեինք, թե ինչո՞վ կարող էինք օգնել, կարգավորել՝ տարածքներին էր վերաբերում հարցը կամ նմանատիպ խնդիրների, այլ ոչ թե քաղաքականացնել եւ բոլորին պատերազմ հայտարարել՝ շատ ավելի վատ վիճակի մեջ հայտնվելով: Կուսակցության անունը բացասական առումով պարբերաբար հնչում է այս ընթացքում, առավել եւս՝ ընտրություններից առաջ, որն, իհարկե, մեզ ձեռնտու չէր, մանավանդ այն ցանկությունը կար՝ համախմբող դառնալ լիբերալ-դեմոկրատական գաղափարախոսություն կրող ուժերի, իսկ առաջին հերթին՝ մեր այն համակիրների համար, ովքեր այս կամ այն առիթով հիասթափվել-հեռացել են կամ իրենց հեռացրել են: Դա պետք էր շատ ավելի կարեւոր գործ համարել, մինչդեռ մտածում են, թե խժդժություններով կարող են դրան խանգարել: Վստահ՝ չեն կարող խանգարել:

**- Հայաստանի քաղաքական դաշտում առկա գործընթացներն ինչպե՞ս եք գնահատում՝ ընդդիմության համախմբման հնարավորությունը կամ ՀՀԿ-ԲՀԿ հարաբերությունները:**

- Ես վստահ եմ, որ ՀՀԿ-ԲՀԿ մրցակցությունը երբեք չի հանգեցնի հակադրության, իսկ մրցակցությունը նորմալ է, որովհետեւ ինքնուրույն կուսակցություններ են երկուսն էլ եւ լուրջ գործոն քաղաքական դաշտում: Հետաքրքրությունը, որ դրսեւորվում է ԲՀԿ-ի նկատմամբ երեք նախագահների կողմից, հենց դա էլ ցույց է տալիս, որ ԲՀԿ-ն լուրջ ուժ է: Բայց եւ միեւնույն ժամանակ միամտություն է, որ ՀԱԿ-ը կարող է մտածել, թե ինչ-որ ձեւով գայթակղիչ ժեստեր անելով կարող է ԲՀԿ-ին առաջարկություն անել: Ցավում եմ, որ իրենք դեռ այդ ձեւով են պատկերացնում քաղաքականությունը: Նման բան լինել չի կարող: Եվ դա էր պատճառը, որ իշխանությունից դժգոհ մարդիկ քաղաքական օրակարգ չձեւավորեցին եւ քաղաքական օրակարգ ձեւավորելու մենաշնորհը զիջեցին ՀՀԿ-ին ու նրա ղեկավարին: Փաստորեն ստեղծվել է երեք նախագահների եռանկյունին, իսկ դրանից դուրս բեւեռ ստեղծելը կլինի շատ դժվար: Կլինեն կուսակցություններ, որ այդպիսի բեւեռ կփորձեն ստեղծել, բայց նրանք էական դերակատարում չեն ունենա: Որովհետեւ մի խնդիր դեռ պետք է հաղթահարենք՝ այն, որ ընտրությունների արդյունքը որոշվում է մինչեւ ընտրությունները: Միշտ փորձում են ուժի կենտրոն գտնել՝ իշխանական թե ընդդիմադիր, այ դա է հարցը, դա պետք է փոխել:

Մ. Խ.

---

ԼՈՒՐԵՐ ՆԻՒ ԵՈՐՔԷՆ

# Ուշացած պարգեւատրումը...

Աւելի քան տարիներ առաջ, ափ մը նուիրեալ, առաւելաբար երիտասարդ ազգայիններ, Ղարաբաղի ազատագրութեան շարժումէն թելադրուած, ծնունդ տուին «Ղարաբաղ կոմիտէին»: Անոնք լուրջ աշխատանքի լծուեցան հարուստ այս համայնքէն ապահովելու մեծագումար նիւթական նուէրներ եւ օրը-օրին զանոնք Ղարաբաղ հասցնելու յանձնառութեամբ նուիրուեցան հայրենասիրական իրա՛ւ եւ լուրջ աշխատանքի:

Ծանօթ ազգային մեր բարերարները՝ պրն Ալեք Մանուկեան, պրն Հրայր Յովնանեան, տկն Լուիզ Սիմոն, Սուրէն Ֆէսճեան, Նազար Նազարեան... եղան առաջիններէն, որոնք սրտաբուխ մասնակցեցան այդ համատարած աշխատանքին: Յարգուած ու այլապէս ալ կեանքի մէջ յաջողած այս երիտասարդ ճարտարարուեստականներու համախմբումը օրհնութիւն մը եղաւ ղարաբաղեան շարժումին, որ անսպասելի յաջողութիւններ արձանագրեց: Ընդհանրապէս, Նիւ Եորքի մեր առաջնորդարանի շուրջ բոլորուած տղաք, մեծաւ մասամբ եկած Պէյրութէն ու Պոլիսէն, անցան աշխատանքի: Լա՛ւ գիտեմ անոնց իւրաքանչիւրին զոհողութիւնը. այցելելով խանութ-խանութ, գործատեղի ու գրասենեակ, տուն-տուն, Նիւ Եորքէն մինչեւ Շիքակօ ու Մայամի ապահովեցին հիմնական դրամագլուխ մը Արցախի մեր ազատամարտիկներուն համար:

Եղան ժողովրդային հանգանակութիւններ, հաւաքներ, ընկերային հաւաքոյթներ, ուր եւս մեր ժողովուրդը մասնակցեցաւ նուիրահաւաքին: Պատերազմի ամենէն տխուր օրերուն իսկ, ի գին կեանքի վտանգի, անոնք այդ հնչուն դրամական փոխանցումները անձամբ կատարեցին՝ այցելելով Ղարաբաղի քաջարի հոգեւոր հովիւին՝ Պարգեւ սրբազանին:

Այդ հերոս տղոց գլուխը անցած էր նիւճըրզիաբնակ երիտասարդ ու նուիրեալ մեր բարեկամը՝ Անդրէաս Ռուպեան: Անոր տունը ամբողջ երկու տարի դարձած էր մեր ժողովներուն հաւաքավայրը: Հոն ալ տեղի կ՚ունենային հանդիպումներ հայաստանցի, ղարաբաղցի, ամերիկացի ու ռուս քաղաքական թէ զինուորական անձնաւորութիւններու եւ ամերիկահայ գործիչներու հետ:

Անշուշտ, այդ օրերու, արեան գնով Ղարաբաղի ազատագրման համար պայքարող մեր հայրենի երիտասարդութեան հետ կարելի չէ բաղդատական մը ընել, սակայն, միւս կողմէ, Սովետական Միութեան մայրամուտին եւ այդ կայսրութեան տապալումի նախօրեակին, շատ բան փոխեց դոլարներու հոսքը, որ կու գար Նիւ Եորքի «Ղարաբաղ կոմիտէէն»: Այդ օրերուն դրա՛մն էր, որ կը խօսէր առաւելաբար, եւ փառք մեր ամերիկահայ իրաւ հայրենասէրներուն, որոնք ճակատագրական այդ օրերուն հասան մեր տղոց խնդրանքին: Անշուշտ օր մը, արդարութիւն ընելու համար այս տղոց կատարած մեծ գործին, արձանագրելու ենք պատմութեան համար «Ղարաբաղ կոմիտէի» աշխատանքը:

Յիշատակենք, որ Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Աստուածածին մայր եկեղեցւոյ բարերարն է ի՛նքը՝ Անդրէասը, հակառակ իր աւետարանական դաւանանքին պատկանելուն: Անձամբ ինք հսկեց անոր վերակառուցման աշխատանքներուն: Կրնանք ըսել, թէ խորհրդային կարգերու տապալումին, առաջին հայկական եկեղեցին բարձրացաւ մեր հողին վրայ... եւ ան այսպիսով դարձաւ բարի օրինակ այն հարիւրաւոր սփիւռքահայ թէ հայրենաբնակ բարերարներուն, որոնք կը շարունակեն այդ բարի ու աստուածահաճոյ աշխատանքը մինչեւ օրս:

Արցախի ու Հայաստանի զոյգ հանրապետութիւններու 20-ամեակի առթիւ, հայրենի պետութիւնը աջ ու ձախ, շատ անգամ արժանի եւ երբեմն՝ ոչ, ազգայիններու պարգեւատրումներ շնորհեց այս տարի:

Ուրախ ենք, որ Անդրէաս Ռուպեան չմոռցուեցաւ այս անգամ: Ի մասնաւորի ՄԱԿ-ի մօտ ՀՀ դեսպանին՝ Կարէն Նազարեանի բարի յիշեցումներուն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահին Նիւ Եորք այցելութեան օրերուն, նոյեմբեր 18-ին, դեսպանատան մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն եւ ուր յանձնուեցաւ հանրապետութեան գնահատագիրն ու «Վաչագան Բարեպաշտ» մեդալը:

«Ղարաբաղ կոմիտէի» նախկին անդամներէն Հրաչ Գաբրիէլեան, Հրանդ Կիւլեան, Արմէն եւ Փոլ Շահինեան եղբայրներու կողքին ներկայ էին Նիւ Եորք-Նիւ Ճըրզիի ծանօթ ազգային դէմքեր: Ներկայ էր նաեւ Արցախի առաջնորդը՝ Պարգեւ արք. Մարտիրոսեանը:

Բացման խօսքով հանդէս եկաւ եւ օրուան հիւրերը ներկայացուց դեսպան Կարէն Նազարեանը: Այնուհետեւ նախագահ Բակօ Սահակեան վեր առաւ Ա. Ռուպեանի եզակի աշխատանքը ազատագրական պայքարի օրերուն:

Դաւիթ Պապայեան կարդաց հրամանագիրը. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման քսաներորդ տարեդարձի կապակցութեամբ եւ տնտեսութեան, մշակոյթի, կրթութեան եւ գիտութեան, առողջապահութեան եւ քաղաքական բնագաւառներում ԼՂՀ մատուցած ծառայութեան համար պարգեւատրում ենք ամերիկահայ բարերար Անդրէաս Ռուպեանը»:

Իր շնորհակալական խօսքին մէջ Անդրէաս Ռուպեան ըսաւ, թէ այս՝ շքանշանին կ՚արժանանան իր գործակիցները, սակայն, աւելին, անոնք, որոնք կեանքի զոհողութեամբ ազատագրեցին Ղարաբաղը: «Այս շքանշանը իրենց կը նուիրեմ»:

Անշուշտ յուզիչ էր երեկոն, մանաւանդ անոնց համար, որոնք կ՚ապրէին օրը-օրին հայկական Լաչինի, Ստեփանակերտի ու Շուշիի եւ Ֆիզուլիի ու Ճըպրայէլի տարածաշրջաններու ազատագրումի պահերը: Հպարտութեան այդ օրերուն միասին ալ կը յիշէին անոնք ճակատներու վրայ զոհուած մեր նահատակները...

Ուշացած պարգեւատրում մըն էր այս, սակայն ոչ մոռացուած. առիթ տուաւ հետ երթալու 20 տարիներ առաջ եւ ապրելու անոր յուշերով:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ
Նյու Ջերզի

# Ինտերնետային մամուլի հեղափոխությունը դեռ չի հասել Հնդկաստան

Մինչ եվրոպական շուկայում ու Միացյալ Նահանգներում խոսում են տպագիր մամուլին սպառնացող ճգնաժամից, Հնդկաստանում տպագիր արտադրանքը շարունակում է զարգանալ:

Հնդկաստանում տպագրվող «Hindustan Times» օրաթերթի գլխավոր խմբագիր **Սանջոյ Նարայանն** առանձնացնում է մի քանի գործոններ, որոնցով պայմանավորված է հնդկական տպագիր մամուլի զարգացումը: Հնդկաստանում բնակչության զգալի մասը դեռեւս գրագետ չէ, բնակչության 52 տոկոսը փոքր է 25 տարեկանից: «Այսինքն մի զգալի հատվածը դեռ նոր է գրել-կարդալ սովորում», ասում է Սանջոյ Նարայանը: Հետեւաբար բնակչության կեսից ավելին չի կարդում ո՛չ ինտերնետային, ո՛չ էլ տպագիր մամուլ:



Hindustan Times

Raid yields luxury label fakes

The Linking Road shop was selling duplicate goods at the cost of original

How to spot a FAKE Louis Vuitton

Հնդկաստանում դեռեւս ցածր մակարդակի վրա է նաեւ ինտերնետ հասանելիությունը: «Եթե համեմատենք ազգաբնակչության թվի հետ, ինտերնետից օգտվողները փոքր տոկոս են կազմում», ավելացնում է պարոն Նարայանը:

Սանջոյ Նարայանը, սակայն, Հյուսիսային Ամերիկայի անգլիախոս շուկայում աշխատող լրագրողներից առաջարկներ է ստացել, ովքեր ցանկություն են հայտնել աշխատելու Հնդկաստանում. «Քանի որ իրենց երկրներում՝ տպագիր մամուլում աշխատանք գտնել չեն կարողանում»: Շարունակելով խոսել տպագիր մամուլին սպառնացող ճգնաժամից՝ պարոն Նարայանը նշում է, որ պարբերաբար հետեւում է www. newspaperdeadpool.com կայքին, որը ներկայացնում է, թե աշխարհի նույնիսկ հեղինակավոր թերթերին փակվելու ինչ վտանգներ են սպառնում: Օրեցօր թերթերի համար դժվար է դառնում ոչ միայն տպագիր արտադրանքը վաճառելը, այլեւ գովազդներ ձեռք բերելը: Ապա անդրադառնալով կոնկրետ Հնդկաստանի փորձին՝ Սանջոյ Նարայանը նշում է՝ ինտերնետային գովազդի գները, համեմատությամբ տպագիր մամուլի գների, դեռեւս ցածր են:

«Hindustan Times»-ը Հնդկաստանի հեղինակավոր թերթերից է, տպագրվում է անգլերեն լեզվով: Հիմնադրվել է 1924-ին, 87 տարիների ընթացքում բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվել, սակայն այսօրվա դրությամբ «Hindustan Times Media» ՍՊԸ-ն պատրաստ է դառնալու Հնդկաստանի խոշորագույն մեդիա ընկերություններից մեկը: Այսօր ընկերությունը ողջ Հնդկաստանի տարածքում ավելի քան 700 լրագրողներ ունի, եւ լրագրողների գենդերային հավասարությունն ապահովված է: «Մեր աշխատակիցների գրեթե կեսը կանայք են, մյուս կեսը՝ տղամարդիկ», ասում է խմբագիրը: Իսկ նվազագույն աշխատավարձն ազգային թերթերում աշխատող լրագրողների, ըստ պարոն Նարայանի, կազմում է ամսական 15 հազար ռուփի՝ շուրջ 300 դոլար: «Hindustan Times»-ը թղթակիցներ ունի նաեւ Չինաստանում, Միացյալ Նահանգներում, Շրի - Լանկայում, իսկ թերթի օրական տպաքանակը կազմում է 3,5 միլիոն: Թերթը տպագրում է ակնարկներ, լուրեր ու վերլուծականներ, որոնք առնչվում են կյանքի տարբեր ոլորտներին:

Ինչպես տեսնում ենք, Հնդկաստանում այսօր տպագիր մամուլն ազդեցիկ է ու շարունակում է զարգանալ, սակայն «Hindustan Times»-ի խմբագիրը կարծում է՝ ինտերնետային մամուլի հեղափոխությունը վաղ թե ուշ կհասնի եւ Հնդկաստան, ինչին պետք է պատրաստ լինել. «Կոնկրետ «Hindustan Times»-ն ունի նաեւ ինտերնետային ռազմավարություն, ինտերնետային առանձին բաժին, եւ խրախուսում ենք մեր լրագրողներին գրելու եւ առցանց տարբերակի համար՝ www. hindustantimes.com»:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Նյու Դելի-Երեւան

# Time-ը Էրդողանին հռչակել է «տարվա մարդ»

Ամերիկյան Time հանդեսի ընթերցողների ամենամյա հարցման համաձայն 2011 թ. «տարվա մարդ» կոչմանն է արժանացել Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը:

Էրդողանին տարվա ամենաազդեցիկ քաղաքական գործիչն է համարել 122,928 մարդ: Բայց միեւնույն ժամանակ 180 հազար մարդ բացասական է գնահատել նրա դերը համաշխարհային քաղաքականության մեջ:

Երկրորդ տեղում է Արգենտինայի ֆուտբոլի հավաքականի ավագ Լիոնել Մեսսին, որն ստացել է 74412 ձայն:

Էրդողանի ժողովրդականության աճին նպաստել են ոչ միայն Թուրքիայի տնտեսական վերելքը, այլեւ նրա իսլամիստական հակումները: Մերիլենդի համալսարանի անցկացրած հարցման համաձայն, չլինելով արաբ, Էրդողանն այսօր համարվում է արաբական աշխարհի առաջնորդ: Այս տարի մեծ էր Թուրքիայի դերը «Արաբական գարնան» մեջ: Բացի դրանից, Էրդողանը համաձայնեց ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի համար ռադար կառուցել Թուրքիայում:

Արդեն 80 տարի Time հանդեսը որեւէ անձնավորության (կամ անձանց խումբ) առանձնացնում է ըստ այն բանի, թե որքան հաճախ է խոսվում նրա մասին կամ որքանով է նա մարմնավորում ժամանակի գլխավոր խնդիրները:

Անցյալ տարի «տարվա մարդ» էր ճանաչվել Facebook սոցիալական ցանցի հիմնադիր Մարկ Ցուկերբերգը, նախանցյալ տարի՝ ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի ղեկավար Բեն Շալոմ Բեռնանկեն, 2008-ին՝ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման, 2007-ին՝ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը:

Ըստ Time-ի, «տարվա մարդը» նա է, ով իր վրա է բեւեռել աշխարհի ուշադրությունը եւ դրական կամ բացասական ազդեցություն գործել համաշխարհային անցուդարձի վրա:

# Կանադան դուրս եկավ Կիոտոյի արձանագրությունից

Կանադայի շրջակա միջավայրի նախարար Պիտեր Քենտը հայտարարել է, որ իր երկիրը դուրս է գալիս Կիոտոյի արձանագրությունից: Վերջինս աշխարհի երկրներին պարտավորեցնում է պայքարել ջերմոցային գազերի արտանետումների դեմ, հիշեցնում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

«Կիոտոյի արձանագրության գործողությունը չի տարածվում ջերմոցային գազերի արտանետումների գծով համաշխարհային երկու առաջատարների՝ ԱՄՆ-ի եւ Չինաստանի վրա: Հետեւաբար՝ համաձայնագիրը չի գործում» ասել է Քենտը, հիմնավորելով Կանադայի քայլը:

Կիոտոյի արձանագրությունը արդյունաբերապես զարգացած 37 երկրներից պահանջում է «ջերմոցային էֆեկտ» առաջացնող գազերի արտանետումների ծավալները 5 տարում 6 տոկոսով կրճատել 1990 թ. մակարդակի համեմատությամբ: Կանադան Կիոտոյի արձանագրությունը վավերացրել է 1997-ին, բայց չի հասել դրանով նախատեսված կրճատումների մակարդակին:

Պիտեր Քենտը դրա համար պատասխանատու է համարում «ազատականների նախկին անբանիմաց կառավարությանը»: Պահպանողականների ներկայիս կառավարությունը հայտարարել է, որ մտադիր է հասնել սեփական նպատակին՝ մինչեւ 2020 թվականը «ջերմոցային գազերի» արտանետումները 17 տոկոսով կրճատել 2005-ի մակարդակի համեմատությամբ:

Կանադան Կիոտոյի արձանագրությունից դուրս գալու մասին հայտարարեց, երբ Դուրբանում (ՀԱՀ) ՄԱԿ-ի կոնֆերանսի մասնակիցները երկարատեւ քննարկումներից հետո այդ փաստաթղթի գործողության ժամկետը երկարաձգեցին մինչեւ 2015 թվականը: Կոնֆերանսին մասնակցում էին գրեթե 200 երկրների պատվիրակներ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

# Միլիարդատեր Պրոխորովն ուզում է դառնալ ՌԴ նախագահ

## *Նա գործում է թերեւս Կրեմլի հավանությամբ*

Ռուսաստանցի գործարար Միխայիլ Պրոխորովը հայտարարել է, որ մտադիր է իր թեկնածությունն առաջադրել ՌԴ առաջիկա նախագահական ընտրություններում: Նա այդ որոշումն անվանել է իր կյանքում ամենակարեւորներից մեկը:



Մամլո ասուլիսում ելույթ ունենալով՝ Պրոխորովն ասել է, որ ինքը շարունակում է ստորագրություններ հավաքել իր թեկնածության օգտին, ինչպես նաեւ սպասում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովում իր գրանցմանը:

Գործարարի խոսքերով՝ իրեն հայտնի են կառավարության ղեկավարի պաշտոնի մի քանի արժանավոր թեկնածուների անուններ: Պրոխորովն ավելացրել է, որ ինքը իր ընտրազանգվածի ներկայացուցիչներ է համարում առաջին հերթին միջին խավի մարդկանց: Այդ մասին հաղորդում է NEWSru.com կայքէջը:

Գործարարը նաեւ հայտնել է, որ հավանություն է տալիս աջակողմյան նոր կուսակցություն հիմնելու ֆինանսների նախկին նախարար Ալեքսեյ Կուդրինի գաղափարին: Պրոխորովը նշել է, որ համապատասխան պայմաններ կարող են ստեղծվել մասնավորապես իր առաջիկա ընտրարշավի շնորհիվ:

ԿԸՀ-ն իր կողմից նշել է, որ Միխայիլ Պրոխորովը պարտավոր է մինչեւ դեկտեմբերի 15-ը միջնորդություն ներկայացնել իր թեկնածությունն առաջադրող ընտրողների խմբի գրանցման վերաբերյալ: Խմբի կազմում պետք է լինեն ՌԴ առնվազն 500 քաղաքացիներ:

Ընտրողների խմբի գրանցումից հետո անկախ թեկնածու Պրոխորովի համար կբացեն հատուկ հաշիվ: Նա պարտավոր է մինչեւ հունվարի 18-ը հավաքել 2 միլիոն ստորագրություն, որից հետո ԿԸՀ-ն 10 օրվա ընթացքում քննության կառնի թեկնածուի խնդրանքը:

«Ֆորբս» հանդեսը 45-ամյա Միխայիլ Պրոխորովի կարողությունը գնահատում է 18 մլրդ դոլար: «Արդար գործ» կուսակցության ղեկավարման անհաջող փորձից հետո նա քաղաքական կարիերան շարունակելու ցանկություն չէր հայտնել եւ նույնիսկ ասել էր, թե Վլադիմիր Պուտինը մնում է Ռուսաստանի նախագահության լավագույն թեկնածուն:

Պրոխորովի թեկնածության անսպասելի առաջադրումը, այն էլ՝ խորհրդարանական ընտրությունների առթիվ տեղի ունեցող զանգվածային բողոքների պայմաններում, փորձագետներին հիմք է տալիս ենթադրելու, որ դա արվում է Կրեմլի հավանությամբ եւ հենց դժգոհ քաղաքացիների համար: Ռուսաստանյան թերթերի գերակշիռ մեծամասնությունը հանգում է հենց այդ հետեւությանը: Հակառակ դեպքում Պրոխորովին պարզապես չէին գրանցի: Չէ՞ որ իշխանությունների հավանությունը չստացած ընդդիմադիրներից ոչ մեկին անցյալում չէր հաջողվել հասնել գրանցման փուլ, նշում են փորձագետները:

# Ամերիկյան զորքը հեռանում է Իրաքից

## *9 տարի անց երկիրը մասնատված է եւ անկայուն*

Վաշինգտոնում պաշտոնապես հայտարարել են Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման մասին: Նախագահ Բարաք Օբաման եւ Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքին Սպիտակ տանը կայացած հանդիպման ժամանակ պայմանավորվել են, որ մինչեւ տարեվերջ ամերիկացի զինծառայողները թողնելու են Իրաքը: Մոտ 9 տարի տեւած ամերիկյան ռազմական «առաքելությունը» մոտենում է ավարտին: Վաշինգտոնը Իրաքի կառավարումը հանձնում է Բաղդադի իշխանություններին, որոնք այսուհետեւ ստիպված կլինեն սեփական ուժերով կարգուկանոն հաստատել երկրում:



Անցած 9 տարիներին Պենտագոնը Իրաքում կորցրել է մոտ 4,5 հազար զինծառայող (պաշտոնական տվյալներով): Ընդհանուր առմամբ միջազգային կոալիցիայի զորքերի կորուստները կազմում են գրեթե 5 հազար զինվոր եւ սպա:

Վաշինգտոնյան հանդիպման ժամանակ Բարաք Օբաման հայտարարել է, որ այսուհետեւ եւս «Իրաքը չի զրկվի ԱՄՆ-ի աջակցությունից եւ օգնությունից»: Արդեն ստորագրվել են համապատասխան համաձայնագրեր, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:

Օբաման փորձում է լավատես երեւալ Իրաքի ապագայի հարցում: Նրան ձայնակցում է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենը: Վերջինիս խոսքերով՝ Իրաքի անվտանգության ուժերը վերջին 9 տարում շատ բան են սովորել դաշինքի զինվորականներից եւ այժմ պատրաստ են ինքնուրույն գործել: «Դեկտեմբերի 31-ին Իրաքում ՆԱՏՕ-ի ուժերի մանդատն ավարտվում է: Ընդհանուր առմամբ այն հաջող էր», ասել է Ռասմուսենը:

Սակայն արեւմուտքի ղեկավարների հայտարարությունները քիչ են համապատասխանում Իրաքում այսօր տիրող տագնապալի կացությանը: Ամերիկացիներն իրենցից հետո թողնում են մի անհանգիստ, անկայուն եւ անապահով երկիր, որտեղ գրեթե ամեն շաբաթ պայթյուններ են որոտում: Դրանք դարձել են Իրաքի յուրօրինակ այցեքարտը: Պետությունը էթնիկական եւ դավանանքային առումներով մասնատված է: Ըստ էության, երկիրը բաժանված է 3 մասի՝ սուննիներ, շիաներ, քրդեր: Փորձագետները կարծում են, որ ամերիկացիների հեռանալուց հետո երկրում կարող է ծավալվել բռնությունների նոր ալիք:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Լույս է տեսել «Հայուհիներ» երկհատորով հանրագիտարանը

Հայ կինը ի սկզբանե եղել ու մնում է ընտանիքի, օջախի պահապանը, մայրության անփոփոխ խորհրդանիշը, հոգեւոր արժեքների կրողն ու սերնդեսերունդ փոխանցողը: Հայ կնոջ դերը կարեւորվեց եւ վերաիմաստավորվեց հասարակական կյանքում, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության, գրականության ու մամուլի, գիտության ու մշակույթի, նաեւ՝ արդյունաբերության, պետական գործունեության ասպարեզներում եւ շարունակվեց նորանկախ պետության կայացման շրջանում, Արցախյան ազատագրական կռիվներում: Եվ ահա, աշխարհում առաջին անգամ հրատարակվում է կանանց՝ հայ կանանց նվիրված հանրագիտարան՝ «Հայուհիներ» երկհատորյակը: Այն ընդգրկում է 12 բաժիններ, որոնցում կենսագրական տեղեկություններ է պարունակում հին ժամանակներից մինչեւ մեր օրերը Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքի ավելի քան 50 երկրներում հայտնի 1236 պատվարժան հայ կանանց մասին, ովքեր փառավորել են իրենց հայրենիքը, անջնջելի հետք թողել տարբեր բնագավառներում եւ տարբեր երկրներում:




Երեկ, ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում կայացավ հանրագիտարանի շնորհանդեսը, որը բացեց ակադեմիկոս **Ռադիկ Մարտիրոսյանը**: Ակադեմիկոսը գնահատանքի խոսք հղեց «Ամարաս» հրատարակչության հասցեին, որը ծանրակշիռ վաստակ ունի արդեն իր լույս ընծայած ավելի քան 500 անուն գրքով, բառարաններով, հանրագիտարաններով, բազմաբովանդակ գրականությամբ եւ այլն: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի աջակցությամբ, Մայր աթոռ սուրբ Էջմիածնի, «Փյունիկ» եւ «Լույս» հիմնադրամների հովանավորությամբ է հրատարակվել հանրագիտարանը: Հրատարակչական խորհրդի նախագահն է Արկադի Ասրյանը, գլխավոր խմբագիրը՝ գրող-հրապարակախոս Զորի Բալայանը եւ բոլոր ոլորտներից մասնագետ խորհրդականներ:

**Պրն Բալայանն** ասաց, որ վեց տարի շարունակ Արկադի Ասրյանը աշխատում է, որ հանրագիտարանը հրատարակվի: «Նա աշխարհի հինգ մայրցամաքներից 50-55 երկրներից փնտրել ու գտել է հայ կանանց մասին պատմող տեղեկություններ՝ սկսած Անահիտ թագուհուց մինչեւ մեր օրերը: Շատ դժվար աշխատանք է 1236 պատվարժան հայ կանանց մասին տեղեկություններ փնտրել ու գտնելը: Իհարկե, կլինեն նաեւ բացթողումներ, որոնք հաջորդ հրատարակության ժամանակ կընդգրկվեն», ասաց Զորի Բալայանը եւ հանրագիտարանի հրատարակությունը համարեց հայ ազգի եւս մեկ հաղթանակ: «Եկեք տեր կանգնենք մեր հաղթանակներին», նշեց պրն Բալայանը եւ խոսքը փոխանցեց **Արկադի Ասրյանին**: Վերջինս տեղեկացրեց, որ շուրջ 600 նամակներ է ուղարկել աշխարհով մեկ, փնտրել ու գտել ինտերնետից հայուհիների՝ սկսած 23 տարեկանից մինչեւ 103 տարեկաններն են ընդգրկված, որոնց թվում են նաեւ տարբեր ազատագրական կռիվների մասնակցած կանայք:

Ամենայն հայոց հայրապետի ողջույնը հաղորդեց Մայր աթոռ Սրբ Էջմիածնի հրատարակչական բաժնի ղեկավար **Նաթան եպս. Հովհաննիսյանը**: Սրբազանը շնորհավորեց բոլոր նրանց, որոնց ջանքերով այսօր հրատարակվել է «կնոջ նման գեղեցիկ ու կարեւոր հանրագիտարան սերունդներին հասցնելու համար: Հայ կանայք շատ-շատ են եւ ես կարծում եմ, որ երկհատորյակով չպետք է սահմանափակվենք: Կարեւորն այն է, որ այս հրատարակության օգնությամբ մենք տեսնում ենք, թե հայ կանայք ինչպիսի պատմական գործունեություն են ունեցել բոլոր բնագավառներում, ընդհուպ մինչեւ դիվանագիտությունը»:

Հանրագիտարանում տարբեր բնագավառների խորհրդատուներ, որոնց թվում էին ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը, ՀՀ ճարտարապետների միության նախագահ Մկրտիչ Մինասյանը, բժշ. գիտ. դոկտոր-պրոֆեսոր Դերենիկ Դումանյանը եւ այլք շնորհավորեցին հանրագիտարանի հրատարակությունը ու նշեցին, որ միայն տղամարդկանցից կազմված խմբագրական կազմի կողմից «Հայուհիներ» հանրագիտարանը հայ կանանց նկատմամբ հատուկ վերաբերմունքի ու երախտագիտության առհավատչան է:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## Ղարաբաղի անկախության 20-ամյակը Կալկաթայի Հայոց ճեմարանում

2011 թվականի դեկտեմբերի 10-ին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեի օրը, հնդկահայ համայնքը եւ Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը մեծ հանդիսությամբ տոնեցին Ղարաբաղի անկախության 20-ամյակը, որը կրում էր «Ղարաբա՛ղ, ես քեզ սիրո՛ւմ եմ» խորագիրը:




Բեմահարթակում Մարդասիրականի սաները Արցախի հանդեպ ունեցած իրենց սերն արտահայտեցին հայրենասիրական մի շարք ստեղծագործություններով. Գուրգեն Գաբրիելյանի «Ղարաբաղ», «Իմ Ղարաբաղ», Սիլվա Կապուտիկյանի «Ղարաբաղի բարբառը», «Հայոց բարդին» եւ այլ բանաստեղծություններ՝ նվիրված Արցախին: Երգչախումբը ներկայացրեց Կոմիտասի «Առավոտ լուսաբեր», Ս. Սահակյանի «Գետաշեն», Ա. Հեքիմյանի «Ղարաբաղցին», Ռ. Ամիրխանյանի «Երկիր հայրենի», Ա. Սմբատյանի «Հայաստան» եւ հայրենասիրական այլ երգեր, պարախումբն էլ Ա. Գեւորգյանի «Արցախ» երաժշտության ներքո ներկայացրեց հաղթական մի պար:

Ձեռնարկն ավարտվեց հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տեր Խորեն վարդապետ Հովհաննիսյանի օրհնության խոսքով: Հայր սուրբը շնորհավորեց ներկաներին Արցախի անկախության առիթով եւ համայն հայության համար շատ թանկ համարելով Արցախի անկախությունը՝ ի մասնավորի ասաց. «Ղարաբաղի ազատագրումը եւ անկախության հռչակումը բացառիկ պատմական կարեւորություն եւ նշանակություն ունեն աշխարհասփյուռ հայության համար: Ցեղասպանություն ապրած եւ հայրենազրկված ժողովրդի միջից Ղարաբաղյան հաղթանակով պարտվողի եւ կորցնողի կարծրատիպը մեկընդմիշտ ջնջվեց: Մեր մեջ բույն դրած նահատակ հայի կերպարը խորտակվեց, եւ փարոսի նման հառնեց հաղթող, պահանջատեր հայը՝ Միացյալ Հայաստանի տեսլականով: Տակավին վաղ է հաղթանակի գինով արբենալ: Մութ ամպերը ամբողջությամբ դեռ չեն հեռացել հայրենի մեր երկնակամարից: Արյան գնով պատերազմում ձեռք բերած հաղթանակը պետք է ամրագրել քրտինքի՝ տնտեսական պատերազմում, որը պարտք ու պարտավորություն է յուրաքանչյուր հայի համար...»:

Օրվա առթիվ Սուրբ Նազարեթ եկեղեցու վարչությունը կազմակերպել էր տոնական հյուրասիրություն:

## Կիմ Քարդաշյանի փայլն ու թշվառությունը

Այս օրերին Քարդաշյան ազգանունը չի իջնում ամերիկյան շոու բիզնեսին առնչվող թեժ լրահոսից: «Reality TV show» աստղ Կիմ Քարդաշյանի առանց այն էլ վայրիվերող վարկանիշն այսօր սրընթաց անկում է ապրում իր ներկայացրած ապահարզանի մասին սենսացիոն դիմումից հետո: Ընդամենը 72 օր տեւած ամուսնությունը NBA ակումբի բասկետբոլիստ 26-ամյա Քրիս Համֆրիսի հետ գերազանցեց հոլիվուդյան արագ ամուսնությունների բոլոր ռեկորդները: Հարսանիքն իր ճոխությամբ եւ երեւույթի վրա զանգվածային լրատվամիջոցների սեւեռմամբ «մարտահրավեր» էր թերեւս տարվա թագավորական հարսանիքի՝ արքայազն Վիլյամի եւ Քեթ Միդլտոնի պսակադրությանը: Պարզապես արդեն 31-ամյա Կիմը շտապ պիտի իրականացներ իր երազանքների այն հեքիաթ-հարսանիքը, ուր ինքը կփայլեր հարսի զգեստում հայկական շլացնող իր գեղեցկությամբ, կողքին ունենալով Քրիս Համֆրիսի պես բարձրահասակ, թիկնեղ մի փեսացու, որը կնվիրեր իրեն 2 միլիոնանոց հարսանեկան մատանի, հանդեսի ընթացքում նա երեք անգամ կզգեստափոխվեր, կկտրեր 15 հազար դոլար արժողության հարսանեկան կարկանդակը:



Մամուլը շարունակում է պնդել այն կարծիքը, թե հոլիվուդյան ապագա սցենարի հավակնող այս հարսանիքը Քարդաշյան ընտանիքի «Kipping up with the Kardashians» շոուի ամենահաջողված ներկայացումն էր, ինչն արժեցավ 10 միլիոն ու բերեց 17 միլիոն դոլարի եկամուտ:

Այս թեման թերեւս երբեք հայ լրագրողի համար նախապատվություն չլիներ, եթե աշխարհով մեկ չհոլովվեր հայկական ազգանունը: Ինչպիսի՞ն է ուրեմն ամերիկահայերի վերաբերմունքը Քարդաշյան ազգանվանն առնչվող այս վերջին խայտառակության նկատմամբ: Նախ ասենք, որ անկախ բոլոր դրդապատճառներից, այս սկանդալային ապահարզանի առաջին զոհը հենց ինքը՝ Կիմն է, ընտանիքի մայր դառնալու առ այսօր իր խորտակված անուրջներով: 31 տարեկանը սուպերմոդելի համար արդեն թոշակային է: Հայտնի է, որ գեղեցկությունը այն միակ «թերությունն» է, որն արագ անցնում է: Այս շտապ հարսանիքի դրդապատճառներից մեկը ըստ Կիմի եղել է այն, որ իր մամա-մենեջեր-մամաջեր՝ Քրիս Ջեններն մի առիթով ասել է, թե իր տարիքում նա արդեն 4 երեխա ուներ: Ի դեպ, այս օրերին Կիմի «անբախտության» առիթով արցունք թափող մայրը արդյո՞ք զղջում է այն բանի համար, որ մենեջերի իր ողջ հմտությունը ուղղվել է դստեր գեղեցկությունը կապիտալ դարձնելու նպատակին միայն: Թերեւս հանգամանքների առավել բարենպաստ զարգացումներ լինեին, եթե ողջ լիներ ընտանիքի հայրը՝ արժանավոր հայ, հայտնի իրավաբան, բիզնեսմեն՝ Ռոբերտ Քարդաշյանը, ով պատգամել է իր զավակներին երբեք չփոխել հայի ազգանունը: Հոր ազդեցությունը մեծ է եղել ընտանիքում նույնիսկ ծնողների բաժանումից հետո: Նշանավոր մոդելուհին իր գրեթե բոլոր հարցազրույցներում ցավով է հիշում հոր կորուստը, նշում նրա ավանդը իր զավակների հայ ինքնության ձեւավորման գործում: «Հայկական Զարկերակ» ռադիոալիքին տված հարցազրույցներից մեկում Կիմը պատմում է իր հորական տատի մասին: Թոռները նրան Նանա են ասել եւ շատ սիրել նրա պատրաստած հայկական համեղ կերակուրները, մանավանդ՝ բիշին եւ լահմաջուն: Ուշագրավ է, որ Քարդաշյանների ընտանիքում հավաքույթների ժամանակ պարում են հայկական շուրջպար շոտլանդուհի մոր՝ Քրիս Ջենների առաջնորդությամբ, որ վաղուց արդեն ուրիշ ամուսին ունի:




Ի դեպ, ճիշտ այն օրերին, երբ սկանդալային ամուսնալուծության մասին լուրերով հեղեղված էր համացանցը, Հոլիվուդում կայանում էր «Dancing with the stars» մեծ ռեյտինգ վայելող հեռուստաշոուն, որին մասնակցում էր Քարդաշյան քույրերի աչքի լույս միակ եղբայր՝ 24-ամյա Ռոբերտ Քարդաշյան կրտսերը: Համակրելի, խելացի մի երիտասարդ, որ զարմացրեց ժյուրիին իր պարային տվյալներով: Մրցույթին Ռոբերտը կատարեց մի պար՝ նվիրված իր հոր հիշատակին: Նա իր պարընկերուհու հետ գրավեց երկրորդ տեղը, ինչը մեծ հաջողություն էր տեխնիկայի եւ արտիստիզմի զրոյական տվյալներով մեկնարկած Ռոբերտի համար: Ի դեպ, այս հաջողության գործում մեծ լումա ունեցան հազարավոր ամերիկահայերի զանգերի քվեները հօգուտ Ռոբերտի:

Ահա այսպես: Ինչ ուզում է լինի, մենք սիրում ենք եւ պաշտպանում մեր հայահունչ ազգանունը:

ՍԱՌԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Նյու Յորք

## Մայր աթոռը լույս է ընծայել «Հայը եւ իր երգը» մանկական երգերի ժողովածուն

Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը օրհնությամբ Ամենայն հայոց կաթողիկոսի հրատարակել է Սիլվա Տեր-Ստեփանյանի եւ Կոմիտաս Գեւորգյանի հեղինակած «Հայը եւ իր երգը» մանկական երգերի գիրքը:

Երգարանում ներառված են ազգային-եկեղեցական տոներին, բարեպաշտական սովորություններին, հայոց պատմության նշանավոր դեմքերին ու դեպքերին, ազգային խորհրդանիշներին նվիրված քառասուն երկու երգեր՝ մանուկների համար դյուրընկալելի եղանակներով:

Գրքի հավելվածում տեղ են գտել երգերի արեւմտահայերեն տեքստերն ու երգերի վերաբերյալ որոշ մեկնաբանություններ: Նոտագրքի արեւելահայերենի փոխադրումը եւ նոտագրումն իրականացրել են կենտրոնի աշխատակիցներ Հասմիկ Աբրահամյանը եւ Ֆլորա Հակոբյանը, իսկ խմբագրումը կատարվել է կենտրոնի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանի կողմից:

Երգարանը նախատեսված է նախադպրոցական ուսումնական հաստատությունների սաների եւ հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտների համար:

# Խորեն Հովհաննիսյանը վերադառնում է ֆուտբոլ

*Անվանի վետերանը կմարզի Տաշքենդի «Լոկոմոտիվը»*

Հայկական ֆուտբոլի անվանի վետերաններից մեկը՝ 1975-ի ԽՍՀՄ գավաթակիր, 1976-ի գարնանային առաջնության արծաթե մրցանակակիր, միջազգային կարգի սպորտի վարպետ, ՀՀ ազգային հավաքականի եւ «Փյունիկի» նախկին գլխավոր մարզիչ Խորեն Հովհաննիսյանը որոշ ընդմիջումից հետո կրկին վերադարձել է ֆուտբոլ եւ զբաղվելու է մարզչական գործունեությամբ: Armfootball.com-ի տեղեկացմամբ նա գլխավորել է Տաշքենդի «Լոկոմոտիվը»: Այս թիմի կազմում հանդես կգա նաեւ Խորեն Հովհաննիսյանի որդին՝ Ժորան, որը ժամանակին խաղում էր «Փյունիկում» եւ Հայաստանի երիտասարդական ու պատանեկան հավաքականներում:



Տաշքենդի «Լոկոմոտիվը» Ուզբեկստանի առաջին խմբի ավարտված առաջնության հաղթողն է: Թիմն իրավունք է ստացել հաջորդ մրցաշրջանում հանդես գալու Ուզբեկստանի բարձրագույն խմբի առաջնությունում: «Լոկոմոտիվը» գլխավորում էր Թաջմուրադ Ագամուրադովը, որը մրցաշրջանի ավարտից հետո համալրել է Տաշքենդի «Պախտակորի» մարզչական շտաբը: Նշենք, որ «Լոկոմոտիվի» մարզական տնօրենն է նախկինում հայտնի ֆուտբոլիստ Վազգեն Մանասյանը: Ժամանակին նա հանդես էր գալիս Դուշանբեի «Պամիրում» ու աչքի էր ընկնում ռմբարկուի հատկանիշներով: Այժմ էլ «Լոկոմոտիվում» իր արդյունավետ խաղով առանձնանում է նրա որդին՝ Արտեն Մանասյանը: Վերջինս 29 գնդակով 2-րդն է ճանաչվել առաջին խմբի լավագույն ռմբարկուների ցանկում՝ զիջելով միայն իր թիմակից Թաջիեւին: Թիմի կազմում հանդես են գալիս եւս 2 հայ ֆուտբոլիստներ՝ դարպասապահ Վազգեն Բաղդասարովը եւ կիսապաշտպան Կարեն Աբրամովը:

Ֆուտբոլասերներին հիշեցնենք, որ Խորեն Հովհաննիսյանը ժամանակին հանդես է եկել Տաշքենդի «Պախտակորում», որի կազմում ոտքի ծանր վնասվածքի պատճառով ստիպված էր ընդհատել ելույթները ֆուտբոլում ու վերադառնալ Հայաստան: 1992-ին, երբ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանն իր ազգային անդրանիկ առաջնությունն անցկացրեց, Խորեն Հովհաննիսյանը խաղացող-մարզչի կարգավիճակով գլխավորեց նորաստեղծ ՀՄԸՄ-ն, որը հետագայում վերանվանվեց «Փյունիկ»: Հովհաննիսյանի գլխավորությամբ «Փյունիկը» 3 անգամ դարձավ Հայաստանի չեմպիոն, նվաճեց ՀՀ գավաթն ու Սուպերգավաթը: 1996-1997-ին Խորեն Հովհաննիսյանը Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչն էր, հետագայում էլ դարձավ «Փյունիկի» նախագահը:

Արդեն բավականին ժամանակ Խորեն Հովհաննիսյանը որոշ հանգամանքներից ելնելով հեռացել էր ֆուտբոլից: Եվ ահա կրկին նա վերադառնում է հարազատ մարզաձեւ, որը նրան համընդհանուր ճանաչում է բերել: Ճիշտ է, առայժմ նա իր գործունեությունը վերսկսում է արտերկրում, սակայն կարծում ենք, որ հայկական ֆուտբոլ վերադարձը եւս կկայանա: Հաջողություն մաղթենք Խորեն Հովհաննիսյանին մարզչական գործունեությունում:

# Բանակային ձյուդոյիստների հաջող ելույթը

Հայաստանի բանակային ձյուդոյիստները հաջող մրցելույթներ ունեցան Ռուսաստանի պաշտպանության նախարարի գավաթի խաղարկությունում՝ գրավելով 2-րդ հորիզոնականը: Մեր թիմի կազմում ընդգրկված էին երիտասարդների Եվրոպայի չեմպիոն Գոռ Հարությունյանը, Դավիթ Ղազարյանը (երկուսն էլ՝ 66 կգ), Սուրիկ Գառնիկյանը, Դավիթ Նիկողոսյանը (երկուսն էլ՝ 73 կգ), Անդրանիկ Չափարյանը (81 կգ), Մհեր Կարապետյանը (90 կգ) եւ Ազատ Աբրահամյանը (90 կգ-ից բարձր):




Նախնական փուլում մեր թիմը 3-2 հաշվով առավելության հասավ ՌԴ-ի արտակարգ իրավիճակների նախարարության ձյուդոյիստների նկատմամբ, ապա հաղթեց Ուկրաինայի ԲՄԱ-ի ընտրանուն: Կիսաեզրափակիչում հայ ձյուդոյիստները պայքարից դուրս մղեցին ՌԴ-ի ներքին գործերի նախարարության հավաքականին ու մտան եզրափակիչ: Վճռորոշ գոտեմարտում համառ պայքար ծավալվեց Ռուսաստանի ԲԿՄԱ-ի հետ: Ի վերջո, 3-2 հաշվով հաղթեցին տանտերերը, որոնք էլ արժանացան խաղարկվող մրցանակին: Մեր թիմը գրավեց 2-րդ տեղը: Թիմի կազմում հատկապես հիանալի ելույթ ունեցավ Գոռ Հարությունյանը, որը շահեց անցկացրած բոլոր 4 գոտեմարտերը:

# Կայծակնային մրցախաղում Դանիելյանն ավելի հաջող խաղաց

Չինաստանում ընթացող ինտելեկտուալ խաղերի շրջանակում անցկացվող շախմատային փառատոնի մասնակիցներն ավարտեցին նաեւ կայծակնային մրցաշարը: Արագ շախմատի մրցաշարի համեմատ Էլինա Դանիելյանը կայծակնային խաղում ավելի հաջող հանդես եկավ: Նա 15 հնարավորից վաստակած 7 միավորով 16 մասնակիցների մեջ գրավեց 10-րդ տեղը: Եթե նախորդ օրն անցկացրած 8 պարտիաներում Էլինան ընդամենը 2 միավոր էր վաստակել եւ ընթանում էր 15-րդ հորիզոնականում, ապա հաջորդ 7 մրցախաղերում իր օգտին 5 միավոր գրանցեց:

9-րդ տուրում Դանիելյանը հաղթեց Էլմիրա Սկրիպչենկոյին, ապա ոչ-ոքի խաղաց Աննա Մուզիչուկի հետ: Հաջորդ 2 պարտիաներում կրկին նա իր օգտին 1,5 միավոր գրանցեց՝ հաղթելով Պիա Կրամլինգին, ոչ-ոքի խաղալով Աննա Զատոնսկիխի հետ: 13-րդ տուրում Դանիելյանը հաղթեց Հարիկա Դրոնավալիին, իսկ ահա աշխարհի չեմպիոնուհի Հոու Յիֆանի հետ մրցավեճում պարտություն կրեց: Հայ շախմատիստուհին մրցաշարն ավարտեց Նանա Ձագնիձեի նկատմամբ տոնած հաղթանակով:

Կայծակնային մրցաշարի հաղթող դարձավ աշխարհի չեմպիոնուհի Հոու Յիֆանը, որը վաստակեց 11,5 միավոր: 9,5-ական միավորով 2-3-րդ տեղերը բաժանեցին Անտոանետա Ստեֆանովան եւ Աննա Մուզիչուկը:

Տղամարդկանց մրցաշարի հաղթող ճանաչվեց ֆրանսիացի գրոսմայստեր Մաքսիմ Վաշիե-Լագրավը, որը 15 հնարավորից վաստակեց 12 միավոր: Նա տոնեց 11 հաղթանակ, 2 պարտիա ավարտեց ոչ-ոքի, կրեց 2 պարտություն Ֆրանցիսկո Վալյեխոյից եւ Զոլթան Ալմաշիից: 10,5 միավորով 2-րդը Ալեքսանդր Գրիշչուկն էր:

Այսօր շախմատային փառատոնի մասնակիցները կսկսեն «կույր» շախմատի մրցաշարը: 3 օրում մրցաշարի մասնակիցները 7 տուր կանցկացնեն՝ որոշելով հաղթողին:



# Մխիթարյանը պահպանեց առաջատարի դիրքը

Շախմատի Բրազիլիայի առաջնության 3-րդ տուրում Գրիգոր-Սեւակ Մխիթարյանն առաջին կես միավորը կորցրեց՝ սեւերով ոչ-ոքի խաղալով Էվերալդո Մացուրայի հետ: 3 տուրից հետո Մխիթարյանը 2,5 միավորով Ռաֆայել Լեյտաոյի հետ շարունակում է գլխավորել աղյուսակը: Վերջինս եւս հաշտություն կնքեց Ջովանի Վեսկովիի հետ մրցավեճում:

2-ական միավորով առաջատարներին հետապնդում են Էնրիկե Մեկինգը, Ալեքսանդր Ֆիեռը, Էվերալդո Մացուրան եւ Յագո Սանտյագոն: 3-րդ տուրում Մխիթարյանը սպիտակներով կմրցի բրազիլացի անվանի գրոսմայստեր Էնրիկե Մեկինգի հետ: Լեյթաոյի մրցակիցը կլինի Հարոլդո դոս Սանթոսը:

# Հրայր Սիմոնյանը գրավեց 3-րդ տեղը

Բուդապեշտում ավարտվեց շախմատի շրջանաձեւ մրցաշարը 10 շախմատիստների մասնակցությամբ: Ավարտական՝ 9-րդ տուրում ոչ-ոքի խաղալով Աթիլա Ժեբեի հետ, Հրայր Սիմոնյանը 5,5 միավորով գրավեց 3-րդ տեղը:

Մրցաշարի հաղթող ճանաչվեց ռուսաստանցի Միխայիլ Անտիպովը: Նա հաշտություն կնքեց Էրիկ Կիսլիկի հետ ու վաստակեց 7 միավոր: Հաղթողին կես միավոր զիջեց լեհ Պավել Ժաբլովսկին, որը 9-րդ տուրում ոչ-ոքի խաղաց Ռաֆայել Ռոդրիգեսի հետ:

# Բեքհեմը մոտ է ՊՍԺ տեղափոխվելուն



Զմռան տրանսֆերային նորություններից հետաքրքրականը Դեւիդ Բեքհեմի հետագա ճակատագիրն է, որը ներկայումս հանդես է գալիս ամերիկյան «Լոս Անջելես Գելեքսիում»: Ֆրանսիական լրատվամիջոցների տեղեկացմամբ, Բեքհեմը գրեթե լիովին համաձայնության է եկել Փարիզի ՊՍԺ-ի հետ պայմանագրի կնքման հարցում: Պաշտոնապես պայմանագրի կնքման մասին կհաղորդվի նոր տարվանից հետո: Նախատեսվում է 1,5 տարով պայմանագիր կնքել Բեքհեմի հետ: Նա այդ ընթացքում մոտ 12 մլն եվրո կստանա: Եթե գործարքը տեղի ունենա, ապա Բեքհեմն արդեն հունվարին կմիանա իր նոր թիմակիցներին ու ՊՍԺ-ի հետ կմեկնի մրցաշրջագայության:

Դեռեւս նոյեմբերին Բեքհեմն ամեն կերպ հերքում էր ՊՍԺ-ի հետ բանակցելու փաստը, նշելով, որ հավանաբար կմնա ԱՄՆ-ում:

Օրերս տեղեկատվություն տարածվեց, թե Բեքհեմն իր 3 որդիների համար ուսումնական հաստատություն է փնտրում: Նշվում է, որ նա ընտրել է Փարիզի կենտրոնում գտնվող դպրոցը, որում սովորելու տարեկան վարձը կազմում է 15-20 հազար եվրո:

Դեւիդ Բեքհեմի որոշման վրա իհարկե իր ազդեցությունն ունի կինը՝ Վիկտորիան: Ժամանակին հենց նրա դրդմամբ Դեւիդը տեղափոխվեց ԱՄՆ: Հավանաբար հենց Վիկտորիան է նրան խորհուրդ տվել տեղափոխվել նորաձեւության կենտրոն Փարիզ, ինչը կարող է նպաստել Բեքհեմի կնոջ ընկերության բիզնեսի զարգացմանը: Այս տարի նրա ընկերությունը 100 մլն դոլարի եկամուտ է ստացել:

Իհարկե, Բեքհեմի համար Փարիզ տեղափոխվելը եւս մեկ հնարավորություն է Անգլիայի ազգային հավաքական վերադառնալու համար: Բացառված չէ, որ նա 2012-ին հանդես գա Լոնդոնի օլիմպիադայի ֆուտբոլի մրցաշարում:

# Կիսաեզրափակիչի մասնակիցները հայտնի են

Ճապոնիայում մեկնարկել է ֆուտբոլի աշխարհի թիմային առաջնությունը: Աշխարհի ուժեղագույն թիմի տիտղոսն են վիճարկում 7 կոնֆեդերացիաների ներկայացուցիչները՝ իսպանական «Բարսելոնը», բրազիլական «Սանթոսը», ճապոնական «Կասիվա Ռեյսոլը», նորզելանդական «Օքլենդ Սիթին», Թունիսի «Էսպերանսը», մեքսիկական «Մոնտերեյը» եւ Քաթարի «Ալ Սադը»:

Նախնական փուլում «Կասիվա Ռեյսոլը» 2-0 հաշվով հաղթեց «Օքլենդ Սիթիին»: Ճապոնական ակումբը հաջողությամբ հաղթահարեց նաեւ քառորդ եզրափակիչ փուլի արգելքը՝ հետխաղյա 11 մ հարվածներով (հիմնական եւ լրացուցիչ ժամանակում գրանցվել էր 1-1 հաշիվը) հաղթելով մեքսիկական «Մոնտերեյին»՝ 4-3: Այսօր կիսաեզրափակիչում «Կասիվա Ռեյսոլը» կմրցի բրազիլական «Սանթոսի» հետ: Դեկտեմբերի 15-ին կիսաեզրափակիչի մյուս խաղում ուժերը կչափեն «Բարսելոնն» ու Քաթարի «Ալ Սադը», որը 2-1 հաշվով պարտության մատնեց Թունիսի «Էսպերանսին»: Եզրափակիչն ու 3-րդ տեղի համար հանդիպումը տեղի կունենան դեկտեմբերի 18-ին:

Ֆուտբոլի աշխարհի թիմային առաջնություններն անցկացվում են 2000-ից՝ փոխարինելով Միջմայրցամաքային գավաթի խաղարկությանը: Այդ մրցանակը մեկ խաղում վիճարկում էին Եվրոպայի չեմպիոնների գավաթակիրն ու Լիբերտադորեսի գավաթի մրցաշարի հաղթողը: Աշխարհի անդրանիկ առաջնությունն անցկացվեց 2000-ին Բրազիլիայում ու ավարտվեց բրազիլական «Կորինթիանսի» հաղթանակով: Ֆինանսական միջոցների սղության պատճառով հաջորդ 4 տարիներին մրցաշարը չանցկացվեց: Միայն 2005-ին մրցաշարը վերսկսվեց: Կրկին հաջողությունն ուղեկցեց բրազիլացիներին, այս անգամ՝ «Սան Պաուլուին»: Հաջորդ տարիներին ուժեղագույնը ճանաչվեցին բրազիլական «Ինտերնասիոնալը», «Միլանը», «Մանչեսթր Յունայթեդը», «Բարսելոնն» ու «Ինտերը»:

Աշխարհի թիմային առաջնության մրցանակային ընդհանուր հիմնադրամը 16,5 մլն դոլար է: Հաղթողը կստանա 5 մլն, 2-րդ տեղը գրաված թիմը՝ 4, 3-րդ մրցանակակիրը՝ 2,5 մլն դոլար: Ամենացածր վարձատրությունը՝ 500 հազար դոլար կստանա 7-րդ տեղը զբաղեցրած նորզելանդական «Օքլենդ Սիթին»:

Բնականաբար, մրցաշարի հաղթողի գլխավոր հավակնորդը «Բարսելոնն» է, որը հնարավորություն ունի դառնալու կրկնակի չեմպիոն հռչակված առաջին թիմը: Հիշեցնենք, որ անցյալ տարի հաղթեց Միլանի «Ինտերը»՝ եզրափակիչում 3-0 հաշվով ջախջախելով աֆրիկյան «Մազեմբեին»: Իսկ թիմի կամերունցի հարձակվող Սամուել Էտո'Օ-ն ճանաչվեց մրցաշարի լավագույն ֆուտբոլիստ:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Բաց դռների հերթական օրը «Վիվասել-ՄՏՍ»-ում



«Վիվասել-ՄՏՍ»-ից տեղեկացնում են, որ Կարիերայի զարգացման ծրագրի շրջանակներում «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխամասային գրասենյակ են այցելել Ալավերդու համայնքային վերականգնողական կենտրոն ՀԿ-ի երեխաները:

«Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանն** աշակերտներին ներկայացրել է կապի ստեղծման պատմությունը, տեխնոլոգիաների զարգացման փուլերը, բջջային կապի առանձնահատկություններն ու բջջային ցանցի առաջընթացը՝ առաջին սերնդից մինչեւ 4G: Նա նկարագրել է նաեւ բջջայինից բջջային զանգի տեխնիկական իրականացումը:

Հատուկ ուշադրություն է դարձվել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հիմունքների ծանոթացմանը, հաշվի առնելով, որ «Վիվասել-ՄՏՍ»-ն Հայաստանում այս մոդելը հաջողությամբ իրականացնող առաջին կազմակերպություններից է:

Դասախոսությունից հետո երեխաները Ռալֆ Յիրիկյանի ուղեկցությամբ շրջել են ընկերության գլխամասային գրասենյակում եւ պատրաստի մոդելի օրինակով պատկերացում են կազմել բջջային կայանի մասին: Նրանք ծանոթացել են նաեւ «Վիվասել-ՄՏՍ»-ի թեժ գծի գործակալների աշխատանքին, այցելել են բջջային համակցման կենտրոն՝ ամենուրեք արժանանալով «Վիվասել-ՄՏՍ» ընտանիքի ջերմ եւ ընկերական վերաբերմունքին:

Շրջայցը եղել է ինտերակտիվ: Մտքերի փոխանակման շնորհիվ երեխաները Ռալֆ Յիրիկյանից ստացել են իրենց հետաքրքրող բազմաթիվ հարցերի պատասխաններ:

# ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է «ԱԶԳ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

**Հարգելի ընթերցող: Սկսվել եւ շարունակվում է «Ազգ» օրաթերթի 2012 թ. բաժանորդագրությունը: Բաժանորդագրության մանրամասներին կարող եք ծանոթանալ այն իրականացնող ներքոնշյալ մամուլի տարածման գործակալություններից.**

- Պրես-Ստենդ- (հեռ.՝ 54-41-99, www.armpress.am)
- Հայմամուլ- (հեռ.՝ 45-30-78, կայքէջ՝ www.haymamul.info.am)
- Հայփոստ- (հեռ.՝ 51-47-51, www.haypost.am)
- Պրես-Ատաշե- (հեռ.՝ 27-02-22, www.press-attache.am)
- Բլից Մեդիա- (հեռ.՝ 58-17-13, www.pressinfo.am)
- Թերթին կարող եք բաժանորդագրվել նաեւ Հանրապետության-47 հասցեում գտնվող խմբագրատանը (հեռ՝ 58-29-60, կայքէջ՝ www.azg.am):

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Այն ընթերցողները, ովքեր կներկայացնեն թերթի բաժանորդագրության կտրոնը, իրավունք կունենան ամիսը մեկ անգամ անձնական բնույթի մեկ անվճար հայտարարություն տեղադրել թերթում, որը 1 շաբաթ կտեղակայվի նաեւ էլեկտրոնային կայքէջում:**

# ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

«Գրիար-Ինշուրանս» ԱՓԲԸ-ին պատկանող բնակելի շինություն 197,6 քառ. մ ընդհ. մակերեսով եւ 0,145 հա տնամերձ հողատարածքով: Գինը՝ պայմանագրային: Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Հացավան գյուղ: Զանգահարել 56-05-87:

# ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

«Ծխնելույզագործական մասնագիտացված սերվիս» ՍՊԸ-ն հայտնում է, որ հրդեհներ են առաջանում նաեւ ծխնելույզների տեղադրման տեխնիկական խախտումների հետեւանքով: Հակահրդեհային պահանջների համաձայն՝ ծխնելույզները պետք է լինեն ջերմամեկուսացված: Սակայն դրանք տեղադրված են տանիքի տակ, մետաղից են, ծխնելույզից դուրս եկող կայծերն ընկնում են տանիք, շփվում փայտյա մասերին եւ առաջացնում են կրակ:

«Ծխնելույզագործական մասնագիտացված սերվիս» ՍՊԸ կենցաղում բնական գազի սարքավորումների անվտանգ օգտագործման համար նպատակահարմարության տեսակետից հայտնում է գազ սպառողներին կենցաղային գազի, սարքերի շահագործման ընթացքում պետք է ստուգել ծխնելույզի քարշի առկայությունը:

Ծխաօդափոխության ուղիների անկախ կոնստրուկցիայի մաքրման ժամանակ անհրաժեշտ է ստուգել խցանումների բացակայությունը, դրանց հերմետիկությունը եւ մեկուսացումը, հրկիզվող կոնստրուկցիաների պահպանվող մասի առկայությունը եւ ճշտությունը, նորմալ քարշի առկայությունը, գլխամասին պաշտպանվող հարմարանքը՝ քամիներից ու անձրեւներից դուրս հանելը, հորիզոնական ծխնելույզների միացումը գազի պարագաներին: Ծխաօդափոխության ուղիների մաքրումը նպատակահարմար է իրականացվի մասնագիտացված կազմակերպության ծխնելուզագործների միջոցով: Բազմաբնակարան շենքերում եւ առանձնատներում ծխատար եւ օդափոխության ուղիների մաքրման աշխատանքները պետք է կատարվեն անմիջապես բաժանորդի ներկայությամբ, քաղաքաիրավական պայմանագրի առկայությամբ: Ցանկացած գազի սարքավորումների ծխնելույզներում քարշի խանգարումը հայտնաբերելիս, դրանք, ենթակա են անմիջապես ստուգման ու մաքրման:

Ներտնային գազի համակարգի շահագործումը հուսալի եւ անվտանգ օգտագործելու համար անհրաժեշտ է պահպանել մի շարք պահանջներ.

- ▼ օգտվել միայն գործարանային արտադրության եւ ավտոմատ սարքերով հագեցված կենցաղային գազասարքերից,
- ▼ գազասարքերը օգտագործել սարքին վիճակում գտնվող ծխաօդատար ուղիների առկայության պայմաններում,
- ▼ ջեռուցման սարքերից եւ ջրատաքացուցիչներից օգտվել ուղիների քարշը պարտադիր ստուգելուց հետո:

Արգելվում է՝

- ▼ ինքնաշեն գազասարքերի օգտագործումը,
- ▼ առանց հսկողության թողնել գազասարքերը,
- ▼ օգտվել ջրատաքացուցիչներից ուժեղ քամու ժամանակ,
- ▼ օդափոխության նպատակով նախատեսված ուղիները որպես ծխատար օգտագործել,
- ▼ ծխատարների եւ գազասարքերի ինքնակամ տեղափոխում,
- ▼ նախագծերից շեղումներ:

Գազի սարքերի, ծխնելույզների մաքրման ու վերանորոգման աշխատանքների ժամանակ քաղաքացիները, քաղաքացիաիրավական պայմանագրի համաձայն, կամավոր ցանկությամբ կարող են դիմել «Ծխնելույզագործական մասնագիտացված սերվիս» ՍՊԸ:

Հարգելի քաղաքացիներ, հոդվածը ընթերցելիս այն ընկալել որպես նպատակահարմարության տեսանկյուն:

*«Ծխնելույզագործական մասնագիտացված սերվիս» ՍՊԸ*

*Ոչ պաշտոնական հրապարակում*

# Հաշվետվություն

## «Թեքեյան Կենտրոն» Հիմնադրամի 2010թ. գործունեության մասին

Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Թեքեյան Կենտրոն» Հիմնադրամ

Հիմնադրամը գրանցված է ՀՀ արդարադատության նախարարի 12.01.2001թ. թիվ 63 հրամանով, պետական գրանցման վկայական172 եւ Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 13.03.07թ. պետ գրանցման վկայական 03Ա 075152:

Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք.Երեւան, Խանջյան 50, հեռ. 57 30 57:

Ֆինանսական տարում Հիմնադրամի տնօրենը, Հոգաբարձուների Խորհրդի անդամները, աշխատակազմը չեն օգտվել Հիմնադրամի միջոցներից:

**Իրականացված ծրագրերը՝**

- Օժանդակություն Հայաստանի Թեքեյան Մշակութային Միավորմանը՝ 2,100 հազ. դրամ, անվճար մատուցված ծառայությունների տեսքով 2,900 հազ. դրամ
- «Փրկություն» հաշմանդամ երեխաների կենտրոն՝ 130 հազ.դրամ
- Ա.Սպենդիարյանի անվ.օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն՝ 740 հազ. դրամ
- Ստեփանավանի Վ.Թեքեյանի անվան թիվ 6 դպրոց՝ 1,000 հազ. դրամ
- Միջդպրոցական մրցույթ-օլիմպիադա՝ 1,067 հազ. դրամ
- Աշակերտական սպարտակիադա՝ 1,409 հազ. դրամ
- Այցելություն թանգարաններ՝ 256 հազ.դրամ
- Ամառային ճամբար Եղեգնաձորում՝ 2,332 հազ. դրամ

Գրքեր՝ 65 հազ.դրամ

Հիմնադրամի ֆինանսավորման աղբյուրները ձեւավորվել են Հիմնադրամի գույքի վարձակալությունից, ինչպես նաեւ անհատ նվիրատուներից ստացված միջոցներից՝

1. Վ.Ուզունյան՝ 10 հազ.դրամ
2. Ն.Խաչատուրյան՝ 1000 ԱՄՆ դոլար /ՀՀ 359,755.50 դրամ/
3. Ա.Պարունյան՝ 200 ԱՄՆ դոլար /ՀՀ 78,400 դրամ/

Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը կազմում է՝ 53,133 հազ.դրամ:

Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը կազմում է 9,099 հազ.դրամ:

Հիմնադրամի 2010թ. աուդիտն իրականացրել է «Լոնդոն Բիզնես Գրուպ» աուդիտորական ընկերությունը:

Սույն հաշվետվությունը հաստատված է Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի կողմից:

***Հիմնադրամի տնօրեն*** ***Ա. Ծուլիկյան***

***Գլխ.հաշվապահ*** ***Ա. Հարությունյան***

### ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
### «Թեքեյան կենտրոն» Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Թեքեյան կենտրոն» Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ այլ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը եւ այլ պարզաբանող ծանոթագրություններ:

**Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը**

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ Հիմնադրամի իրավասու կառավարման մարմինը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներին ու արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետեւանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու եւ արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի մշակումը, կիրառումը եւ պահպանումը, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրությունը եւ կիրառումը, ինչպես նաեւ տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը: Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում հաշվապահական գրանցումների եւ փաստաթղթերի պատշաճ պահպանման համար, որոնք ցանկացած ժամանակ ճշգրտորեն կարտացոլեն Հիմնադրամի ֆինանսական վիճակը: Նա պարտավոր է անհրաժեշտ քայլեր ձեռնարկել՝ ուղղված Հիմնադրամի միջոցների պահպանությանը, կեղծիքների ու խախտումների բացահայտմանը եւ կանխմանը:

**Աուդիտորի պատասխանատվությունը**

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք ՀՀ աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները եւ աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որ ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների եւ բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացումը: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետեւանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրել է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու եւ արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, սակայն ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, հաշվապահական անձնակազմի կողմից կատարված հաշվապահական գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռքբերված աուդիտորական ապացույցների բավարար հիմք են հանդիսանում մեր աուդիտորական կարծիքն արտահայտելու համար:

**Եզրակացություն**

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակի եւ նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների եւ դրամական հոսքերի ճշմարիտ եւ իրական պատկերը՝ համաձայն ՀՀ հաշվապահական հաշվառման մասին օրենքի, հաշվապահական հաշվառման ստանդարտների եւ այլ իրավական ակտերի:

*11 մարտի, 2011 թ.*

***Աուդիտի ղեկավար՝ Գառնիկ Ալեքսանյան***

***Տնօրեն Տիգրան Զորյան***

Կազմակերպիչ «Ֆլորես»Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «ԱԴԱՄԱՆԴ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում, շարունակում է «ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող գրավադրված գույքի աճուրդային վաճառքը՝

1. Բնակարան, ընդ. մակերեսը՝ 85.1 ք.մ: Հասցե՝ ՀՀ,ք. Երեւան, Դեղատան փող., 10 շ., ձեղնահարկ 15: Լոտի մեկնարկային գինը՝ 33046000 ՀՀ դրամ:
2. Բնակարան, ընդ. մակերեսը՝ 92 ք.մ, ինքնակամ շինություն, ընդ. մակերեսը՝ 5.5 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Շեւչենկո, 10 շ., բն. 33: Լոտի մեկնարկային գինը՝ 22885000 ՀՀ դրամ:

Աճուրդներն անցկացվելու են դասական եղանակով՝ մեկնարկային գնի բարձրացմամբ, ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում: Աճուրդի մասնակիցները՝ ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ.ռեգիստրի վկայականի պատճենը:

Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել www.borsa.am :

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 13.12.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: